

ԱՊԱԳԻԱՅ

ԼՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 2000 ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 14 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2015

• VOL. XXXVI, NO 2000 • LUNDI, 14 SEPTEMBRE 2015 • MONDAY, SEPTEMBER 14, 2015

1915-2015

ՀԱՅՈՑ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

100-ԲԳ ՏԱՐԵՎԱՐԶ



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ

ԹԵՐԹԻՍ 2000-ՐԴ ԹԻՒԸ

Երեւոյ քառասուն տարիներ առաջ, այս առաւօտ, արեւածագին հետ լոյս աշխարհ եկաւ «Ապագայ» շաբաթաթերթը ամբողջ գիշերուայ մը երկունքէն ետք, 13 Սեպտեմբեր 1975-ին:

Երեւոյ նորածին մանուկը այսօր մեր առջեւ կը կանգնի 40-ամեայ երիտասարդի անխառն ուրախութիւն եւ արդար հպարտութիւն յառաջացնող զգացումներով: Այսօր ի ձեռնին ունինք Գանատայի նորակազմ հայ գաղթօճախին առաջին Մետրոպատառ շաբաթաթերթի 2000-րդ համարը:

Բնականաբար դիւրին չեղաւ «Ապագայ»-ի քառասունամեայ ճանապարհորդութիւնը, սակայն ան չընկրկեցաւ որեւէ խոչընդոտի դիմաց, այլ հաւատքով, յարատեւութեամբ ու անկոտրում կամքով շարունակեց հայ մամուլի իր առաքելութիւնը, իր առաջնահերթ նպատակի տեսլականով՝ ուղղամտութեամբ եւ լայնախոհութեամբ հետապնդելով հայ ժողովուրդի եւ Գանատահայ գաղթօճախի ընդհանրական շահերը: Եթէ եղան սայթաքումներ, մարդկայնօրէն անխուսափելի բացթողումներ, սակայն չեղան երբեք դիտումաւոր շեղումներ, շիլ հաշիւներ կամ գիտակցուած կողմնակալութիւններ:

«Ապագայ» կարողացաւ պատշաճիլ եւ համակերպիլ յարափոփոխ միջավայրի մը պահանջներուն, շնորհիւ նոյնպէս պայծառատես եւ արդարամիտ իր ընթերցողներուն անվերապահ նիւթական եւ բարոյական գորակցութեան: Մօտ ամիսէ մը, թերթիս քառասունամեակի հանդիսաւոր տօնակատարութեան առիթով ականատես պիտի ըլլանք անկիւնադարձային նոր զարգացումի մը՝ abakanews.com համակարգչային յեղաշրջումին, շարունակելով հանդերձ տպագրեալ «Ապագայ»:

Բազմահազար թիւերու յաջորդական հանգրուաններու մաղթանքներ «Ապագայ»ին:

Յ.Ա.

Նախագահ Սարգսեան ընդունեց ֆրանսայի խորհրդարանականներու պատուիրակութիւնը

Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Սերժ Սարգսեան Հինգշաբթի 3 Սեպտեմբեր 2015-ին, ընդունեց Ֆրանսայի Հանրապետութեան Ազգային Ժողովի Ընկերակարական խմբակցութեան նախագահ Պրոնսօ Լը Ռուի գլխաւորած պատուիրակութիւնը: Այս մասին կը հաղորդէ ՀՀ Նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութիւնը:



Նախագահը ողջունած է հիւրերը եւ նշած, որ ուրախ է պարուն Լը Ռուի եւ պատուիրակութեան մէջ գտնուող շարք մը խորհրդարանականները Երեւանի մէջ մէկ տարի առաջ կայացած հանդիպումէն ետք կրկին հիւրընկալելու համար, ուրախ է նաեւ պատուիրակութեան կազմին մէջ տեսնելու առաջին անգամ Հայաստան այցելած պատգամաւորներ:

Հանդիպման ընթացքին զրուցակիցները երկուստեք կարեւորած են տարբեր մա-

կարդակի յաճախակի փոխայցելութիւններն ու շփումները, որոնք, անոնց համոզմամբ, աւելի կ'ամրապնդեն հայ-ֆրանսական բարեկամութիւնն ու լաւ հնարաւորութիւն են՝ տեղւոյն վրայ անմիջական մթնոլորտի մէջ քննարկելու երկկողմ հետաքրքրութիւն ներկայացնող հարցերը: «Ֆրանսայի պարագայում այսպիսի հանդիպումները դարձել են անանդական. վերջին մէկ տարուայ ընթացքում խոր-

հրդարանական երեք մեծ պատուիրակութիւններ են այցելել Հայաստան եւ նաեւ Լեռնային Ղարաբաղ: Ընդհանրապէս, վերջին տարիներին հայ-ֆրանսական առանձնաշնորհեալ յարաբերութիւնները նոր որակ են ստացել՝ նշանաւորուելով երկկողմ կապերի վերընթաց զարգացմամբ բոլոր ոլորտներում», - գոհունակութեամբ նշած է նախագահ Սերժ Սարգսեան:

Շար. էջ 2

Արծրուն Յովհաննիսեան. «Սահմանին հայ գինձառայող մը նահատակուած է»

Հայ-ատրպէյճանական սահմանին իրավիճակը քանի մը օրէ լարուած է, սակայն անհկա չի կրնար բերել լայնածաւալ պատերազմական գործողութիւններու: «Արմենփրես»-ի փոխանցմամբ՝ ՀՀ պաշտպանութեան նախարարի մամուլի խօսնակ Արծրուն Յովհաննիսեան ՊՆ վարչական համալիրին մէջ կայացած ասուլիսի ժամանակ ըսած է, որ գործողութիւններ այս կամ այն կերպ կ'ընթանան, սակայն յստակ նախանշաններ չկան ըսելու, որ կրնան մեկնարկել ռազմական լայնածաւալ գործողութիւններ:



«Հակառակորդը 2 Սեպտեմբերին, կրկին ակտիւ կրակոցներ է արձակել յատկապէս Տաւուշի մարզում սահմանի ողջ երկայնքով: Կրակոցները շարունակուել են մինչեւ առաւօտ, օգտագործուել են տարբեր տրամաչափի արկեր, ականանետեր եւ դիպուկահարներ: Դրանք մեծ քանակ են կազմում: Ցաւօք, երկու քաղաքացիական անձ է վիրաւորուել: Ցաւօք, ունեցել ենք զոհ: Պայմանագրային գինձառայող Հայկ Դեւոյեանն է զոհուել», - ըսած է Արծրուն Յովհաննիսեան՝ անելցնելով, որ հակառակորդը լռած է միայն հայկական զինուած ուժերու պատասխանէն ետք:

«Գիւղերի հատուածում կան վնասներ, սակայն չափի մասին ես չեմ կարող ասել: Պէտք է ասեմ, որ իրավիճակը սահմանին վերահսկելի է: Նախորդ երկու օրուայ լարուածութեան հետեւանքով հակառակորդը նոյնպէս կորուստներ է ունեցել», - ըսած է

Արծրուն Յովհաննիսեան:

Ինչ կը վերաբերի լրատուամիջոցներով շրջանառուող լուրերուն, որ Տաւուշի մարզի մէջ սահմանային իրավիճակէն մեկնած բնակիչները կը տարհանեն, Յովհաննիսեան ըսած է, որ մեկնելով «Շանթ 2015» զօրավարութիւններու ծրագիրէն, Տաւուշի մարզին մէջ մեծ ուսումնական կայան ստեղծուած է, քանի մը հարիւր մահճակալներ բերուած են, տարհանման տեղեր ստեղծուած, որպէսզի հաւաքի ժամանակ պարզ դառնայ, թէ սենարով պատերազմի ժամանակ ինչպէս բնակիչները անվտանգ կրնան տարհանել:

Թուրքիոյ ԵՄ հարցերով նախարարը հայերուն դէմ իրականացուած կոտորածը անժխտելի փաստ կը համարէ

Թուրքիոյ ԵՄ հարցերով նախարար եւ գլխաւոր բանագնաց Ալի Հայտար Զոնջան լրագրողներու հետ հանդիպման ժամանակ անդրադարձած է Հայոց Ցեղասպանութեան խնդրին՝ չժխտելով, որ նման բան տեղի ունեցած է:



Ինչպէս կը հաղորդէ՝ «Արմենփրես»-ը՝ վկայակոչելով «Ակօս» պարբերականը՝ լրագրողները հարցուցած են, թէ ինչպիսի կեցուածք պիտի դրսեւորէ նոր նախարարը այն պարագային, եթէ Եւրոխորհրդարանի օրակարգին վրայ կրկին յայտնուի Հայոց Ցեղասպանութեան հարցը, որուն ի պատասխան Զոնջան ըսած է. «Ցեղասպանութիւնը այսպէս կոչուած է, թէ ոչ, կարելոր չէ, յստակ է եւ պարզ միայն մէկ բան՝ կոտորած եղած է: Ատիկա բոլորն ալ կ'ընդունին»:

ԵՄ հարցերով նախարարը անելցուցած է, որ այս հարցին վերաբերեալ իր կուսակցութիւնը դեռ քննարկում պիտի իրականացնէ եւ կը յստակեցնէ իր դիրքորոշումը: Ալի Հայտար Զոնջան քրտական Ժողովուրդներու Ժողովրդավարական կուսակցութեան անդամ է: Այդ կուսակցութեան նախագահ Սելահիթթին Տեմիրթաշը նախագահական ընտրութիւններու նախընտրական քարոզարշաւի ընթացքին հանդէս եկած էր յայտարարութեամբ, որ ընտրուելու պարագային պիտի ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը:

Արփինէ Յովհաննիսեան նշանակուած է ՀՀ արդարադատութեան նախարար

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի հրամանագիրով Ազգային ժողովի Հանրապետական խմբակցութեան պատգամաւոր Արփինէ Յովհաննիսեան նշանակուած է Հայաստանի Հանրապետութեան արդարադատութեան նախարար:

Այս մասին կը յայտնեն Հայաստանի նախագահի աշխատակազմի հասարակութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութիւնէն:

Արփինէ Յովհաննիսեան ծնած է 4 Նոյեմբեր 1983-ին, Երեւանի մէջ: 2004-ին՝ աւարտած է Երեւանի պետական համալսարանի իրաւաբանական բաժանմունքը, 2006-ին՝ Նոյն բաժանմունքի մագիստրոսութեան բաժինը: 2009-ին աւարտած է ԵՊՀ իրաւաբանական բաժանմունքի ասպիրանտուրան: Ան իրաւաբանական գիտութիւններու թեկնածու է:

2003-էն 2006 աշխատած է Հայաստանի Հանրապետութեան արդարադատութեան նախարարութեան աշխատակազմի դատաիրաւական բարեփոխումներու վարչութեան քրեակատարողական ծառայութեան բարեփոխումներու բաժանմունքի առաջին կարգի մասնագետ, 2006-2007-ին՝ յառաջատար մասնագետ: 2007-ին Երեւանի պետական համալսարանի իրաւաբանական բաժանմունքի քաղաքացիական իրաւունքի ամպիոնի դասախօս է: 2007-2008-ին եղած է Հայաստանի արդարադատութեան նախարարութեան աշխատակազմի իրաւական արձանագրութիւններու փորձաքննութեան վարչութեան պետի տեղակալ: Մայիս 2008-էն Սեպտեմբեր 2008 եղած է Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավարի օգնական: 2008-էն 2011՝ Ազգային ժողովի նախագահի խոր-



հըրդական: 6 մայիս 2012-ին ընտրուած է Ազգային ժողովի պատգամաւոր համամասնական ընտրակարգով՝ Հայաստանի Հանրապետական կուսակցութենէն:

Թուրքի մը գողցած հայկական Աւետարանը Կիպրոս վերադարձուած է

News.am կը հաղորդէ, որ հայկական ձեռագիր Աւետարանը, որ գողցուած էր Թուրքիոյ կողմէ հիւսիսային Կիպրոսի բնագրաւումէն ետք, այժմ Կիպրոս վերադարձուած է:

Ըստ «Ֆամակուսթա» թերթին, ընդհանուր առմամբ 173 մասունք վերադարձուած է Կիպրոս:

Անոնք վերադարձուած են, երբ Գերմանիոյ վերաքննիչ դատարանը վերջնական որոշում տուած է Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած Կիպրոսի շըրջաններէն թուրք մաքսանենգներու գողցած գանձերուն մասին:

Գանձերը, որոնց մէջ կային եկղեցիներու որմանկարներու կտորներ, սրբապատկերներ, հայկական ձեռագիր Աւետարանը եւ նախապատմական հնութիւններ, յայտնաբերուած էին 1997-ին, Միւնխի ապրող թուրք մաքսանենգի մը բնակարանին մէջ:

Հայոց Տեղասպանութեան մասին Արժանթինի դիրքորոշման համար՝ Անգարա կը քննադատէ Արժանթինի արտաքին գործոց նախարարը

«Արմենփրես»՝ վկայակոչելով «Պուլետու Այրէս Զերըլտ» օրաթերթը, կը հաղորդէ, որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան Ամերիկաներու հարցով վարչութեան գլխաւոր տնօրէն Պերթալ Փազարը լատինամերիկեան լրատուամիջոցներու հետ հանդիպումի մը ընթացքին քննադատած է Արժանթինի արտաքին գործոց նախարար Զեթթոր Թիմերմանը՝ Հայոց Տեղասպանութեան վերաբերեալ Արժանթինի դիրքորոշման համար:



«Այդպիսի դիրքորոշումը Արժանթինին չ'օգնէր բարելաւելու իր յարաբերութիւնները Թուրքիոյ հետ», նշած է թուրք պաշտօնատարը:

2006-ին Արժանթինի բոնկրէտ դատապարտած էր հայ ժողովուրդին դէմ գործուած ցեղասպանութիւնը, իսկ 2015-ի սկիզբը Արժանթինի նախագահ Թիսթինա Ֆեռնանտես տէ Զիրըներ վերահաստատած էր օրէնսդիր մարմնի որոշումը՝ նշելով, որ այդ դիրքորոշումը կը կիսէ նաեւ երկրին գործադիր մարմինը:

Այս տարուան Յունուարին Արժանթինի արտաքին գործոց նախարար Զեթթոր Թիմերման այցելած էր Թուրքիա, ուր հանդիպում ունեցած էր թրքական կառավարութեան ներկայացուցիչներուն հետ եւ բազմաթիւ հարցերու կողքին արծարծած նաեւ Հայոց Տեղասպանութեան խնդիրը:

Յիշենք, որ Արժանթինը Հայոց Տեղասպանութիւնը ճանչցած միակ լատինամերիկեան երկիրը չ'է: Խորհրդարանական մակարդակով զայն ճանչցած են նաեւ Զիլին, Պոլիվիան, Վենեզուելան, Ուրուկուէյը եւ Պրագիրը:

Նախագահ Սերժ... Ծար. էջ 1-էն

Հանդիպման մասնակիցները համակարծիք եղած են, որ միջպետական յարաբերութիւններու ամրապնդման կարեւորագոյն բաղկացուցիչ է միջխորհրդարանական համագործակցութիւնը, որու զարգացման համար իրենց նշանակալի ականդն ունին երկու երկիրներու խորհրդարաններուն մէջ ձեւաւորուած հայ-ֆրանսական բարեկամութեան խումբերը:

Պատգամաւոր Պրուսո լը Ռուս նախագահ Սերժ Սարգսեանին փոխանցած է Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտի ջերմ ողջոյնները: Ան եւս գոհունակութեամբ նշած է, որ տարբեր մակարդակներու մէջ յաճախակի դարձած երկ-

կողմ հանդիպումները մշտապէս աչքի ինկած են արդիւնաւետութեամբ՝ հանդիպումէ հանդիպում նախանշելով համագործակցութեան նոր եզրեր:

Ֆրանսացի պատգամաւորները կարեւոր համարած են նաեւ այցելութիւնը Լեռնային Ղարաբաղ եւ շեշտած, որ ըլլալով խորհրդարանականներ, իրենց առաքելութիւնն ու անմիջական պարտականութիւնն կը համարեն տեղոյն վրայ ծանօթանալ իրավիճակին, շփուիլ մարդոց հետ եւ այդ ամենուն արդիւնքով ձեւաւորուած իրենց պատկերացումները, տեսածն ու լսածը փոխանցել նաեւ իրենց գործընկերներուն: Ըստ անոնց, Ֆրանսան շահագրգռուած է, որպէսզի ԼՂ հիմնախնդրի լուծման համար շարունակուին երկխօսութիւնն ու խաղաղութեան հաստատման ուղղուած

գործընթացը, եւ իրենց այցելութիւնները Լեռնային Ղարաբաղ եւս այդ նպատակին կը ծառայեն:

Հանդիպման ժամանակ հիւրերը ՀՀ նախագահէն խնդրած են հակիրճ ներկայացնել ՀՀ սահմանադրական բարեփոխումներու գործընթացը ու այդ բարեփոխումներու նպատակը: Պրուսո լը Ռուս ընդգծած է, որ, իր համոզումով, որեւէ կառուցակարգային փոփոխութիւն, որ միտուած է կառավարման լաւագոյն տարբերակին եւ կ'արժանանայ երկրի քաղաքացիներու հաւանութեան, միայն ողջունելի է, եւ եթէ պետութիւնը ինչ-որ ժամանակ կ'երթայ կառավարման համակարգի բարելաւման, ատիկա կը վկայէ պետութեան քաղաքական հասունութեան մասին:

Հայաստան պատրաստ է աւելցնել Լիբանանի մէջ հայ խաղաղապահներուն քանակը

Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան Նախարար Սեյրան Օհանեան Օգոստոս 26-ին ընդունած է Հայաստանի մօտ Իտալիոյ դեսպան Ճիովաննի Ռիչչոլիի եւ ռազմական կցորդին, որու հաւատարմագրութեան առթիւ Նախարար Օհանեան շնորհաւորած է ու յաջողութիւն մաղթած է զինք: Օհանեան նաեւ յայտնած է թէ ՀՀ Պաշտպանութեան Նախարարութիւնը պատրաստ է աւելցնել Լիբանանի մէջ տեղակայուած հայ խաղաղապահ ստորաբաժանման անձնակազմի քանակը, նկատի ունենալով հայ եւ իտալացի խաղաղապահներու օրինակելի գործակցութիւնը: Իտալիոյ դեսպանը նշած է որ իտալիոյ կողմը բարձր կը գնահատէ համագործակցութիւնը երկու երկիրներու միջեւ ու պատրաստ է զայն առաւել ընդլայնելու:

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manoogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ԱԼԵՏԻՍ ՊԱԳՉԱԼԵԱՆ

Ծանուցումներու, նուիրատուութիւններու եւ գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻՒ ՄԱԿԻՍԵԱՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՍԵՍ Բ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$90
U.S.A. 1st class (US)\$90
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75

Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”

70-րդ տարեդարձի՝ դասընկերներու աննախընթաց յիշատակի հաւաք

Անցեալ Ուրբաթ երեկոյ, 21 Օգոստոս 2015-ին, Թեթեան Մշակութային Միութեան «Տօթ» Յարութիւն եւ Սիմա Արզումանեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ հաւաք մը, նշելու համար Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանի 1945ին ծնունդ առած դասընկեր դասընկերուհիներու 70 ամեակի տարեդարձի տօնակատարութիւնը:

Չաւեն Սարգիսեանի եւ Միհրան Մնշեանի հետ ծրագրեցինք այս հաւաքը: Աշխարհի չորս անկիւնները ցրուած մեր դասընկերներուն հետ կապ հաստատեցինք, բայց նկատի ունենալով մեծ հեռավորութիւնները, ի վերջոյ 14 հոգի Մոնթրէալէն եւ 3 հոգի Թորոնթոյէն միայն ներկայ եղան այս հաւաքին:

Միասին հաճելի մթնոլորտի մէջ ընթրել ետք եւ յիշատակներ եւ կատակներ փոխանակելէ յետոյ, տարեդարձի կարկանդակը բերուեցաւ:

Շարունակուեցաւ պատկերներու տարափը եւ բարեմաղթութիւններու խօսքերը եւ ի վերջոյ մտաք բարով ըսինք խոստանալով 2-3 տարիէն կրկին հաւաքելի:

Սիրելիներ, մենք երրորդ սերունդն ենք Մեծ Եղեռնէն վերապրողներուն: Մեր ծնողներուն շնորհիւ, մենք ունեցանք ինչ որ իրենք առիթը չ'ունեցան ունենալու, այսինքն լաւ ուսում եւ բարեկեցիկ կեանք, որպէս հպարտ հայորդիներ կու գանք փաստելու թուրքին թէ իրենք չհասան իրենց նպատակին:

Մենք եւ մեր ժառանգորդները կանք եւ պիտի մնանք ու դեռ շատանաք:

ՅՐԱՅՐ ՏԵՐ ԳԵՌՈՐԳԵԱՆ



2-րդ կարգ, կանգնած ձախէն աջ:- 1- Չաւեն Սարգիսեան, 2- Սիլվիա (Տեր Սարգիսեան) Յակոբեան, 3- Արթին Յակոբեան, 4-Ճոն Սոսոյեան, 5- Յակոբ Ամիրեան, 6- Ճագ Սերայտարեան, 7- Սիրվարդ (Թաշճեան) Պենետիքթ, 8- Յէյնզ Պենետիքթ, 9- Նորմանտ Տիօն, 10- Յրայր Տեր Գեորգեան, 11- Պերճ Գոգորեան, 12- Արշօ Կուլտեմիրեան, 13- Պողոս Աճեմեան, 14- Մերի (Մազլումեան) Տորամաճեան, 15- Աննի Գազանճեան, 16- Միհրան Մենշեան, 17- Մարօ Գոգորեան, 18- Անի (Գաւալճեան) Խուտաւերտեան

Ա- կարգ նստած, ձախէն աջ:- 1- Անահիտ Ամիրեան, 2- Արշօ Ճիհանեան, 3- Մանուշ Տեր Գեորգեան, 4- Անահիտ Գարապայճեան, 5- Գեղունի (Տուրկերեան) Տիօն, 6- Անահիտ (Պըչաքճեան) Սերայտարեան, 7-Աւետիս Ճիհանեան, 8- Մարգօ Մենշեան, 9- Լիտիա (Շահինեան) Սոսոյեան, 10- Սեդա Գարապաճեան, 11- Ռաշել (Ֆահմի) Տորամաճեան.



Ձախէն աջ:- Պրնք. Միհրան Մենշեան, Պողոս Աճեմեան, Աւետիս Ճիհանեան, Յակոբ Ամիրեան, Յրայր Տեր Գեորգեան, Չաւեն Սարգիսեան եւ Պերճ Գոգորեան



2-րդ կարգ, կանգնած ձախէն աջ:- Տիկնք. 1- Սեդա Զարապատճեան, 2- Լիտիա (Շահինեան) Սոսոյեան, 3- Անահիտ (Պըչաքճեան) Սերայտարեան, 4- Սիլվիա (Տեր Սարգիսեան) Յակոբեան, 5- Գեղունի (Տուրկերեան) Տիօն, 6- Սիրվարդ (Թաշճեան) Պենետիքթ, 7- Արշօ Կուլտեմիրեան, 8- Մերի (Մազլումեան) Տորամաճեան.

Ա- կարգ նստած, ձախէն աջ:- Ռաշել (Ֆահմի) Տորամաճեան, Անի (Գաւալճեան) Խուտաւերտեան

Հ.Հ. կառավարութիւնը սահմանադրութեան փոփոխութիւններուն վերաբերեալ առաջարկներ պիտի ներկայացնէ Ազգային ժողովին

Սահմանադրական փոփոխութիւններու հոլովոյթին մէջ, կը պարզուի, թէ կառավարութիւնը առաջարկներ ունի: Երկուշաբթի՝ 31 Օգոստոսին, կառավարութեան նիստին ընթացքին վարչապետը ըսաւ. «6 ժամ թեման քննարկած են, առաջարկները պետք է նաեւ խորհրդարան ներկայացուին: «Նախարարութիւնները նաեւ առաջարկներ ներկայացուցած են, որոնք իսկապէս արժանի են քննարկման»:

Խօսքը ուղղելով կառավարու-

թեան աշխատակազմի ղեկավար Նախարար Դաւիթ Յարութիւնեանին, վարչապետը ըսաւ. «Կ'առաջարկեմ Ազգային ժողովին հետ կազմակերպել քննարկումներ, որոնց կը մասնակցին նաեւ նախարարներն ու նախարարութիւնները: Պիտի փորձենք ընդհանուր յայտարարի գալ, որմէ ետք ես կը ստորագրեմ զանոնք եւ կ'ուղարկեմ Ազգային ժողով», ըսած է Յովիկ Աբրահամեան:



Մեծ շուքով նշուեցաւ Լ.Ղ.Յ. հռչակման 24-րդ տարեդարձը

Չորեքշաբթի՝ 2 Սեպտեմբեր 2015-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման 24-րդ տարեդարձի տօնական ձեռնարկներու շարքը առտու կանուխ սկսաւ Ստեփանակերտի փողոցներով Պաշտպանութեան բանակի զինուորականներու հանդիսաւոր քայլերթով: Այս մասին կը հաղորդէ «Արցախփրէս»-ը:

Առաւօտեան սկսաւ նաեւ մարդոց հոսքը դէպի Ստեփանակերտի յուշահամալիր, ուր ծաղիկներ եւ ծաղկեպսակներ դրուեցան Յաղթանակը խորհրդանշող յուշաքարի պատուանդանին:



Աշխատանքային այցով Արցախ գտնուող ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատուիրակութիւնը, ԼՂՀ Նախագահ Բակօ Սահակեանի, ԼՂՀ երկրորդ Նախագահ Արկարդի Ղուկասեանի, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մար-



տիրոսեանի, Ազգային ժողովի Նախագահ Աշոտ Ղուկեանի, վարչապետ Արայիկ Յարութիւնեանի, Արցախի ու ՀՀ բարձրաստիճան այլ պաշտօնեաներու հետ Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակէն ոտքով այցելեց յուշահամալիր:

Հայկական երկու պետութիւններու բարձրագոյն ղեկավարները ծաղիկներ եւ ծաղկեպսակներ խոնարհեցին քաղաքային յուշահամալիրի մէջ եւ հարեւանութեամբ գտնուող Արցախեան ազատամարտի ընթացքին զոհուած ազատամարտիկներու շիրիմներուն: Այնուհետեւ տեղի ունեցաւ ՊԲ պատուոյ պահակախումբի հանդիսաւոր քայլերթը:

Սերժ Սարգսյան. «Արցախի անկախութեան օրը համայն հայութեան մեծ տօնն է»



Նախագահ Սերժ Սարգսյան շնորհաւորական ուղերձ յղած է Լեռնային Ղարաբաղի Անկախութեան տօնի առթիւ.

«Սիրելի՛ հայրենակիցներ, Շնորհաւորում եմ ձեզ Լեռնային Ղարաբաղի անկախութեան տօնի առթիւ:

Արցախի անկախութեան օրը համայն հայութեան մեծ տօնն է, բայց առաջին հերթին ձեր՝ արցախցիներիդ տօնն է: 1991 թուականի նուիրական այս օրը՝ անկախութեան հռչակմամբ բռնութեան ու բռնապետութեան ճիրաններից, ազգային ու կրօնական խտրականութեան, հալածանքների ու ջարդերի, ստի, կեղծիքի ու հակահայկական ռասիստական քարոզչութեան ճիրաններից դուրս բերուեց հայութեան տառապեալ, բայց նաեւ հերոսական հատուածներից մէկը: Եւ դա արեցիք դուք:

Այդ պատմական քայլով ոչ թէ աւարտուեց, այլ նոր հանգրուան թելակոխեց բոլորիս պայքարը յանուն սեփական տանն արժանապատուօրէն ապրելու իրաւունքի, յանուն մարդկային ու ազգային

իրաւունքների: Արցախցին կռուի դաշտում պաշտպանեց իր եւ իր զաւակների կեանքը, փրկեց իր եւ իր զաւակների ապագան:

2015 թուականին՝ Մեծ եղեռնի 100-ամեակի տարում, երբ մենք ոգեկոչում ենք մեր՝ արդէն սրբադասուած Նահատակների յիշատակը, ազատ, նորոգ ու հպարտ Արցախը նոր՝ աւելի խոր իմաստ ու արժէք է ստանում բոլորիս համար:

Սիրելի՛ հայրենակիցներ, Օր օրի աշխարհում աւելի ստուարանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ նրա ժողովրդի բարեկամների շարքերը: Օր օրի բարձրանում է ազատութեան ու ժողովրդավարութեան ճանապարհով անշեղօրէն ընթացող Արցախի միջազգային հեղինակութիւնը: Դա արդիւնքն է ձեր արդար ու ստեղծագործ աշխատանքի, պետականաշինութեան եւ բանակաշինութեան ասպարէզներում ձեր արձանագրած յաջողութիւնների:

Օր օրի աշխարհում աւելի ստուարանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ նրա ժողովրդի բարեկամների շարքերը: Օր օրի բարձրանում է ազատութեան ու ժողովրդավարութեան ճանապարհով անշեղօրէն ընթացող Արցախի միջազգային հեղինակութիւնը: Դա արդիւնքն է ձեր արդար ու ստեղծագործ աշխատանքի, պետականաշինութեան եւ բանակաշինութեան ասպարէզներում ձեր արձանագրած յաջողութիւնների:

Կրկին շնորհաւորում եմ այս փառապանծ տօնի առթիւ՝ կրկնելով հին ու իմաստուն կարգախօսը. «Ազատութիւնը չունի այլընտրանք»:

Նախագահ Սահակեան. «Արցախի ժողովուրդը տերն է իր հողի ու ջուրի եւ ամեն ինչ կ'ընէ իր զաւակներու կիսատ ձգած գործը աւարտին հասցնելու համար»



The Office of the NKR President V.D.

Արցախի Հանրապետութեան Նախագահի նստավայրին մէջ Սեպտեմբեր 1-ին տեղի ունեցած է ԼՂՀ հռչակման 24-րդ տարեդարձին առիթով պարզեւատրման հանդիսաւոր արարողութիւն:

Արցախի Հանրապետութեան Նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութեան փոխանցած տեղեկութիւններով՝ Նախագահ Սահակեան նշած է, որ Արցախի Հանրապետութեան օրը այն բացառիկ տօներէն է, որուն կերտման գործին իր աւանդը ունեցած է մեր ողջ ժողովուրդը, եւ արդէն 24 տարի է, որ բոլորս միասին, Հայաստանի եւ Սփիւռքի մեր քոյրերու եւ եղբայրներու հետ ձեռք ձեռքի կը կառուցենք ազատ ու ինքնիշխան ժողովրդավարական պետութիւն, որ հաստատուն քայլերով առաջ կ'ընթանայ՝ տարուէ տարի արձանագրելով նոր յաջողութիւններ ու ձեռքբերումներ եւ իր արժանի տեղը զբաղեցնելով միջազգային հանրութեան շարքին:

«Արցախի ժողովուրդը տերն է իր հողի ու ջրի եւ անում է ամեն ինչ՝ իր նպատակներին հասնելու, իր քաջ զաւակների կիսատ թողած գործը աւարտին հասցնելու համար», - իր ելոյթին մէջ ընդգծած է Նախագահ Սահակեան:

Հանդիսութեան ներկայ եղած են Հայ Առաքելական Եկեղեցույ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանը, ԼՂՀ ԱԺ Նախագահ Աշոտ Ղուկեանը, պաշտօնատար այլ անձինք:

Սեյրան Օհանեան. «Հայկական զինուժը կը վերահսկէ իրավիճակը սահմանին»

Իրավիճակը հայ-ատրպեյճանական եւ Արցախ-ատրպեյճանական սահմանին կը շարունակէ մնալ լարուած, սակայն հայկական բանակը, տիրապետելով խնդիրներուն, կը կարենայ համապատասխան հակահարուած տալ եւ պահպանել սահմանային անդորրը:

ՀՀ պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեան ըսած է, որ վերջին օրերուն հակառակորդը գործածած է ականանետեր, իրականացուցած է խափանարարական հետախուզութեան փորձեր, որոնք, սակայն, յաջողութեամբ կանխուած են:

«Սահմանային լարուածութիւնը առկայ է: Կրակոցներուն թիւը մէկ կ'աւելնայ, մէկ կը պակասի, եւ այս վերջին ժամանակահատուածին Հայաստանի եւ Արցախի սահմանին կը կրակեն ականանետեր: Հայկական շինուած ուժերը բոլոր միջոցառումները կ'իրականացնեն առաջին գիծին վրայ՝ անվտանգութեան խնդիրներու ապահովում, հակառակորդին հետեւելը եւ համապատասխան կանխարգելիչ միջոցառումներու իրականացումը: Հակառա-



կորդը կատարած է խափանարարական հետախուզութեան քանի մը փորձեր, որոնք յաջողութեամբ կանխուած են», - ըսած է Սեյրան Օհանեան:

Նախարարը նաեւ ակնարկած է, որ հայկական զինուժը իրավիճակը կը վերահսկէ եւ ժողովուրդը կրնայ հանգիստ ըլլալ, քանի որ հայկական բանակը իր խնդիրներուն կը տիրապետէ եւ ինչպէս Արցախեան գոյամարտի տարիներուն այնպէս ալ այսօր, անոնք փայլուն կերպով կ'իրականացնէ:

Հալէպի մէջ՝ ջուրի եւ էլեկտրականութեան տագնապը կը շարունակուի

Սուրիոյ Հալէպ քաղաքը հոսանքազրկուած է, կը շարունակուի նաեւ ջուրի տագնապը: Այս մասին «Արմենիփրէս»-ին հետ գրոյցին նշեց Հալէպի իր աղբիւրը՝ ակնկոյտը, որ մաքուր ըմպելի ջուրը զինուած ընդդիմադիրները գետի մէջ կը հոսեցնեն, որ բնակիչներուն համար մեծ դժուարութիւններ կ'առաջացնէ:



«Մարդիկ կ'օգտուին ջրի որոնք ընդ կամ շիշերով կը գնեն: Բացի այդ, քաղաքին մէջ կը շարունակուի վառելանիւթի տագնապը», - նշեց աղբիւրը: Ինչ կը վերաբերի քաղաքին մէջ տիրող իրավիճակին, ան նշեց, որ Սեպտեմբեր 2-ին եւ 3-ին հայաշատ թաղամասերուն մէջ իրավիճակը համեմատաբար հանգիստ է:

«Բերիոյ Լուրեր» Ֆէյսպուքեան էջը կը տեղեկացնէ, որ Սեպտեմբեր 1-ի երեկոյեան ահաբեկչական խմբաւորումները իրասանդ արձակած են Հալէպի քրիստոնէաբնակ Սուլեյմանիէ-Վիլլաներ թաղամասերու մերձակայքին: Բարեբախտաբար, պայթիւնը տեղի ունեցած է օդին մէջ եւ մարդկային վնասներ չեն արձանագրուած: Նիւթական վնասներ կրած են շրջաններու շէնքերն ու մեքենաները:

Հալէպ 2012-ի. ամառուընէ ի վեր յայտնուած է կառավարական ուժերու եւ զինուած տասնեակ խմբաւորումներու բախումներու թիրախին: Բախումները այնտեղ մինչեւ այսօր կը շարունակուին: Քաղաքի արեւմտեան թաղամասերը կը գտնուին կառավարական ուժերու, իսկ արեւելեան թաղամասերը՝ զինուած խմբաւորումներու հսկողութեան տակ:

Հայոց Տեղասպանութեան հարցը պիտի քննարկուի Պեռլինի մէջ

Պեռլինի մէջ Սեպտեմբեր 5-ին տեղի պիտի ունենայ գերմանական Հայնրիխ Պեոլլ հիմնադրամին կողմէ կազմակերպուած «Անցեալի Ներկան. 1915թ. Հայոց Տեղասպանութենէն 100 տարի անց» խորագիրով խորհրդաժողովը:

Խորհրդաժողովին ողջունի խօսքով հանդէս պիտի գան Հայնրիխ Պեոլլ հիմնադրամի տարածաշրջանային ղեկավար Սերգէյ Լակոտինսքին եւ Գերմանահայկական ընկերակցութեան նախագահ Ռաֆֆի Գանդեանը:

Ըննարկման հիմնական թեմաները պիտի ըլլան Հայոց Տեղասպանութիւնը, վերապարծներու յուշերը եւ, թէ ինչպէս պետք է այսօր անդրադառնալ այդ հարցերուն:

Ելոյթ պիտի ունենան հայ, թուրք եւ գերմանացի բանասէսներ: Խորհրդաժողովին ելոյթներով հանդէս պիտի գան Պոլստըսթակի փոխնախագահ Գլաուտիա Ռոթը եւ Պոլստըսթակի այլ պատգամաւորներ:

Ատրպեյճանի Արտաքին Նախարարութեան Յայտարարութիւնը Հենրիխ Մխիթարեանի մասին

Ինչպէս հաղորդած էինք, Հայաստանի յայտնի ֆութպոլիստ, «Տորթմունտ» Պորուսիա խումբի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանի անուան շուրջ աղմուկ բարձրացած էր մրցումի մը պատճառով: Գերմանական ակումբն ու ատրպեյճանական «Կապալա» խումբը վիճակահանութեան արդիւնքով ինկած են նոյն խումբի մէջ՝ ՈՒԷՖԱի Եւրոպայի Լիգէն ներս եւ պետք է մրցին թէ՛ Գերմանիոյ եւ թէ՛ Ատրպեյճանի յարկի տակ: Բայց «Կնճռոտ» հարց մը կար Ատրպեյճանի համար: Տորթմունտ Պորուսիայի կազմէն ներս հանդէս կու գայ Հենրիխ Մխիթարեան որ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի է եւ որպէս այդպիսին արգիւտած է իր մուտքը ու ան կրնայ ձերբակալուիլ Ատրպեյճանի մէջ, որովհետեւ առանց Ատրպեյճանէն վիզա առնելու Ղարաբաղ այցելած է: Մխիթարեանի՝ Ատրպեյճանի մէջ խաղին մասնակցելու հարցը անմիջապէս փոթորիկ ստեղծեց երկրէն ներս: Ատրպեյճանական մամուլը գրեց որ Մխիթարեան չի կրնար Ատրպեյճան երթալ ու խաղալ, գերմանական թերթերն ալ սկսան քննարկել Մխիթարեանի երթալ-չերթալու հարցը, նշելով որ հայազգի մարզիկը առանցքային դեր ունի Տորթմունտի կազմէն ներս եւ իր մասնակցութիւնը կրնայ ճակատագրական ըլլալ խումբի համար:



Հայաստանի Արտաքին Նախարարութեան մամուլ բանբեր Տիգրան Բալայեան ըսաւ որ եթէ Մխիթարեանի մուտքը արգիւտի, ատիկա անգամ մը եւս պիտի յստակացնէ այդ երկրի իշխանութիւններու կողմէ հայատեացութեան քարոզչութիւնը:

Բոլոր այս զարգացումներու լոյսին տակ Ատրպեյճանի Արտաքին Նախարարութիւնը պարզաբանումներ ըրաւ ու յայտարարութիւն մը հրապարակելով ըսաւ որ մարզանքը պետք չէ խառնել քաղաքականութեան հետ: «Մասնակցելով այսպիսի խաղերու, պետութիւնները հանդէս կու գան ՈՒԷՖԱի կանոններով ու անոնց հիման վրայ խաղեր կը կազմակերպեն իրենց երկիրներու մէջ: Ֆութպոլի բնութագրիչներէն մէկն այն է որ խաղը խմբային բնոյթ ունի: «Տորթմունտ» Պորուսիա խաղախումբի այցելութիւնը կ'ընկալուի ո'չ թէ որպէս անհատական, այլ խումբի այցելութիւն եւ հակառակ մարզանքի ու քաղաքականութեան միջեւ առկայ հա-սարակաց եզրերուն, Ատրպեյճանի դիրքորոշումն այն է որ մարզանքը պետք չէ գործածել քաղաքական նպատակներով: Գալով անբաղձալի մարդոց ցանկին, ապա այստեղ իւրաքանչիւր դէպք կը քննարկուի անհատական սկզբունքով» ըսուեցաւ յայտարարութեան մէջ:

Լիոնի մէջ սփիւռքահայ գործարարները միաւորող միջազգային ցանց պիտի ստեղծուի

Ֆրանսայի մէջ պիտի ստեղծուի Ֆրանսա-Հայաստան միջազգային ցանց, որուն նպատակն է միաւորել հայ գործարարները, զարգացնել անոնց միջեւ տնտեսական կապերն ու յարաբերութիւններ հաստատել Հայաստանի հետ՝ իբրեւ տարածաշրջանի հետ կամուրջ հանդիսացող երկիր:

Ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչ Հիլտա Չոպոյեան յայտնած է, որ նորաստեղծ կազմակերպութիւնը պիտի գնահատէ եւ փորձէ օգտագործել նաեւ Միջին Արեւել-

քի, ԱՄՆ-ի, ԱՊՀ-ի եւ Իրանի մէջ գործող հայկական սփիւռքի տնտեսական կարողութիւնները:

Ցանցի պաշտօնական բացման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 23-ին Լիոնի Ռոն-Ալպեան տարածաշրջանի խորհրդարանի դահլիճին մէջ: Բացման արարողութեան պիտի մասնակցին Ֆրանսայի մէջ ՀՀ դեսպան Վիգէն Չիթեչեան, ֆրանսացի եւ ֆրանսահայ բազմաթիւ գործարարներ, հասարակական եւ քաղաքական գործիչներ:

Լեւոն Արոնեան յաղթեց Սենթ Լուիսի մրցաշարին

Հայկական ճատրակի յառաջատար, ճատրակի Հայաստանի հաւաքականի անդամ Լեւոն Արոնեան յաղթեց ԱՄՆ-ի Սենթ Լուիս քաղաքին մէջ տեղի ունեցող ուժեղագոյն մրցաշարին:

«Սինթուէֆիլտ քաղաք»-ի խաղարկութեան վերջին հանգրուանին Արոնեանի մրցակիցը Վեսելին Թոփալովն էր: Հայ կրանտմասթըրը կը խաղար սեւ խաղաքարերով եւ խաղը ավարտեց ոչ ոքի արդիւնքով: «Արմեն-փորէս»-ի հաղորդմամբ, 9 հնարաւորէն վաստակելով 6,5 կետ Արոնեան դարձաւ այս մրցաշարին յաղթողը: Մրցաշարը մեկնարկած էր Օգոստոս 23-ին:



ԿԵՆՍՈՒՆԱԿ ՊԱՅՔԱՐԻ ՈԳԻՈՎ

Ո՛ւր Է Հայկական Մեր «Լացի Պատ»ը

ՊԱՅՏԻԿ ՔԱՆԱՅՈՒՄ

Որքանով արդար կարելի է ըլլալ երբ յանդգնությունը կ'ունենանք բարձրաձայն արտայայտություն, թե ի սփիւռս աշխարհի առկայ է մարդկային բացայայտ ողբերգություն: Իսկ դառնագոյնը անոր ա՛յն է, որ ըմբոստություն խոյանքովը տրոփող, զգայուն սրտերուն մէջ անթեղուած զգացումներն են, որոնք կը մղեն մարդ արարածը պոռթկալու անարդարության ճակատին:

Աշխարհի բոլոր ցամաքամասերու տարածքին օր ըստ օրէ կը բազմանան մարդկային ողբերգությունները, որոնց մասին խորհրդածելու պարտականությունը կարծէք միայն ձգուած է Միացեալ Ազգերու ղեկավարության ճակատագրին: Միթէ պահը չէ այսօր համամարդկային առումով զգալ զրկուածներուն թշուառութիւնը, բռնի տեղահանութեան տեղափոխութիւնը, օգնութեան ձեռք երկարելը, ամէն ծիգ ի գործ դնելով կասեցնել հայրենական արտագաղթը, գիտակցութիւն սերմանել տկարներուն հոգիներուն մէջ՝ վերջ տալու համար ստորկական «խոնարհութեան», պոռթկումի ազդանշաններ ցուցաբերել անհետ կորած ազատամարտիկներու, զինուորներու եւ առեւտրային երկրներու հաշտունքի եւ վերջապէս ձեռնոց մը շարունակ մարդկային անարդարութիւններուն դէմ՝ յանուն վաղուան նորահաս սերունդի մարդկային դաստիարակութեան: Մեր շուրջ բոլոր սկսած ենք նշմարել բոցեղէն հոգիներով սաւառներու սահմանուած մարդ էակին մօտ՝ ըմբոստութենէ եւ պայթեցնելու ոգիէ պարտուած լման անեացում մը, ուր անշունչ հոգիներու խորը հանգեցուցած են կեանքի կրակը: Ակամայ կը խորհրդածեմ ինքզինքս հետ, թէ փոխան անձնատուր ըլլալու կեանքի մտրակումներուն, ինչու չըլլալ գոռ ձայնը խղճմտանքին ապստամբ՝ որ անկարելի հոգիները կը խռովէ... չըլլալ շողն արեւին՝ որ մերկ հոգիներու մտող մարմինը կը տաքցնէ, ... ահա՛ զանգատս համայն մարդկութեան, ու հարց կու տամ ինքզինքս. ո՛ւր է հայկական մեր «Լացի պատ»ը: Միթէ՞ բաւ չէ այսօր «պատմականորէն» անարդար քար լռութիւն պահելու քաղաքականութեան որդեգրումը ե՛լ ազգային, ե՛լ մարդկային ու ընկերային գետնի վրայ, երբ մեր ճակատները լացի պատին դէմ կը կարմրին՝ փխրուած սրտէն շալոյղ արիւնէն, երբ մարդկային ցասումը համարեա ամէն մարդերու մէջ՝ պայթարող սրտերու կեանքին երակը կը դառնայ եւ ըմբոստ ձգտումը՝ պողպատ ջիղ մը, որ յեղափոխական պայթարի դաշտ նետուող ոգիին ծնունդ կու տայ ու կը գինէ գայն:

Մարդկայնութիւն, արդարութիւն եւ բնականութիւն փնտռողը շա՛տ տառապած կ'ըլլայ իտեալական սերերէ եւ մարդկայնական բաղձանքներէ. անպատասխան մնացած ըլլալու զգացումը կը տագնապեցնէ զինք, յուզումէն

նաեւ՝ կ'ուռի կոկորդին մէջ, բայց անզօր է փալկանացայտ շանթ դառնալու մերկ կռակին վրայ մարդկային բնութեան, մարդկային հպարտութեան՝ որ տիրական հարստութենէն կը ծնի, մարդկային հպարտութեան՝ որ տիրական հարստութենէն կը ծնի, մարդկային անիրաւութեան՝ որ խիղճ չունի եւ իր անգութ տիրապետութեան խորքերէն թշուառներու եւ զրկուածներու զանգուածային երեսին կը փչէ իր քամահրանքին փրփուրները: Ասոր համար՝ ճակատս «լացի պատ»ին դէմ է, բայց ցասում կը մխայ, մինչ սիրտս կու լայ խոնարհներուն, բախտագուրկներուն, ճնշուածներուն, արտաքսուածներուն, արտագաղթողներուն, օր ցերեկով համայն մարդկութեան տեսապաստառն դիմաց իրենց որդեգրած կրօնքին պատճառով գլխատուղներուն, բռնի տեղահանութեան, պարտադիր կրօնափոխ եղածներուն համար, որոնք իմ եղբայրներս ու քոյրերս են պայթարի մարդկային ազատութեան ճամբաներուն վրայ:

Աչքերս կ'ուղղեմ ծեր Ֆաուստին, որուն հանճարեղ հեղինակը. «Ի՛նչս անելի՛ յոյս...» կը խնդրէ. մինչ մենք՝ «սեր մարդկութեան, անելի՛ սեր արդարութեան հանդէպ կ'աղերսենք»: Ծեր Ֆաուստը սիրոյ կը սպասէր, կեանքի գիտութիւններէն եւ իմաստութենէն պարտասած, եւ այս վերախորհող յուզումին իբրեւ խորհրդանշան՝ իր չորցած եւ կորաբամակ ուներէն վար սփռեր էր ծիրանի, բոցավառ պատմութեան մը: Առջեւը կար հուժկու զանկ մը, նոյնպէս մաշած, որ նման է փորձառութիւններէ յոգնած իր հոգւոյն մէջ ծնող սիրոյ յոյսին: Հա՛մար է ան ու հանդարտ խառնուածքի տեր, որ դարերու ուսումն ամբար է, բայց խանդոտ կեանքի կարօտին, սեր կը փնտռէ եւ կը դիւթուի գեղեցիկէն, առանց գիտակցելու, թէ գեղեցկութիւնը մտածում մըն է միայն, այս պատրանքով ալ կը սիրէ ան ու պիտի հաւատայ, թէ տառապող եւ նուիրուող մարդկային սերը կեանքի գերագոյն ու յաւիտենական ճշմարտութիւնն է:

ճակատս՝ «Լացի պատ»ին դէմ, արիւնող եւ նուիրուող սերին փա՛ռքը կ'ոգեկոչեմ, փրկուելու համար իմացական պատրանքներու մեղքերէն: Իւրաքանչիւր անցնող օր իր հետքը կը ձգէ հարցականներով լեցուն ու մենք կը շարունակենք անուն մը տալ իւրաքանչիւր թղթածրարի, որոնց մէջ թաքնուած են զարշահոտ իրողութիւններ, լեցուն քիչ մը անարդարութիւններով, քիչ մը անմարդկութիւն, քիչ մը ապագայնութիւն եւ դէռ շա՛տ քիչեր... որոնք միայն կը մթազնեն հորիզոնը վաղուան գալիք սերունդներուն:

ԱՐՏԱԳԱՂԹԻ ՄՏԱՅՈՒՅՈՒԹԻՒՆ

Աշխարհի տարածքին գտնուող իւրաքանչիւր անհատ միթէ՞ հարցականներով լեցուն կեանք մը չպարիր: Հի հիմէ՞ր իրմէ անելի գիտուններուն՝ իր հարցադրումներուն պատասխան մը գտնելու

ականակիքներով: Որքա՛ն տխուր է անձամբ ականատեսը ըլլալ անոնց ապշանքին ու շփոթութեան այն ճշմարտութիւններուն հանդէպ, զորս պատգամել կը յաւակնէին հարիւրամեակներ շարունակ: Միթէ՞ անոնք չդիմեցին աշխարհի «յաջողածներուն», որոնք ժողովուրդին արեամբ վճարած են ընչաքաղցութեան մեղաւոր պահանջները: Գրեցին, պատգամեցին եւ զայրոյթով ալ կը շարունակէն դատապարտումի լրգունգներ դաջել, պատասխանատուներ փրկուող ի տես հայրենական յուզող արտագաղթին: Սփիւռքի նախարարութեան տուեալներով, այսօր Սփիւռքը եօթ-ութ միլիոն է: Յրուած անելիքան վաթսուն երկիրներու մէջ: Իսկ Հայաստանի մէջ, լաւատես հաշիւներով, կ'ապրին 3 միլիոն 26,000 հայեր: Մեր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով կ'արձանագրուի երեւոյթ մը. հայրենի հողին վրայ ապրողները մօտաւորապէս երեք անգամ անելի նուազ են՝ քան Սփիւռքի մէջ ապրողները: Եթէ մեր հայեացքները չվարանինք սեւեռելու դէռ մօտիկ անցեալին՝ Հայաստանի Հանրապետութեան Սիւնիքի մարզի Դիցմայրի գիւղին մէջ, 1999 թուականին լիբանանէն, Կիպրոսէն եւ Սուրիայէն մօտ երեք տասնեակ երիտասարդներ իրենց հանգիստ տունները ձգած զգած էին Շավ գետի ափին՝ վերաբնակեցման ծրագիր սկսելու Քաշաթաղի մէջ: Միթէ՞ տեղին չէ հարց տալ, թէ ո՛ւր հասած է այսօր այդ ծրագիրը, որ յաջողած էր խանդավառել սփիւռքահայ երիտասարդութիւնը՝ իրենց հայեացքները սեւեռելու դեպի Մայր Հայրենիք: Տակաւին մռայլ է մեզի համար, թէ ի՞նչ դրդապատճառներէ մեկնելով իր հայրենական նպատակները իրագործելու չձառայեց այդ ծրագիրը: Սփիւռքի նախարարութիւնը իր զանազան ծրագիրներով բազմա-հազար երախաներ յաջողեցաւ հայրենի տուն բերել, սակայն քննադատական ակնոցներով դիտողներու համար, գիտակցական տհասութիւնը կրկին գերիշխող ըլլալով, Դիմատետրի (Ֆէյսպուք) էջերէն սկսեալ մինչեւ աշխարհասփիւռ մամուլ քննադատութիւններով ողողուեցաւ եւ ըստ սովորականին, գեղեցիկ ու բարին միշտ եղան քաւութեան նոխագ:

ՀԱՄՇԵՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՆՁՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Վերջին տասնամեակներուն հայկական հարցի զոհասեղանին որպէս յոյժ կարեւոր խնդիր՝ զեւտեղուած է համշէնահայութեան հարցը: Արդարեւ անելի քան ինստուն տարիներէ ի վեր լռութեան դատապարտուած է՝ Յեղասպանութեան յաջորդող ժամանակաշրջանին «թրթաքանդ հայեր» ու հարցը: Անոնց թիւը տարբեր տարբեր գնահատականներով 300.000-էն կը հասնի մինչեւ 3.000.000-ի: Թուրքիոյ հասարակ քաղաքացիներ մինչեւ բարձրագոյն մակարդակի **Շար. էջ 13**

Վարչապետ Աբրահամեան. «Մեր երկրի եւ ժողովուրդի ապագան գիտելիքն է»

«Մեր երկրի եւ ժողովրդի ապագան գիտելիքն է: Մենք ամէն ինչ պետք է անենք, որպէսզի ուսումնական հաստատութիւններում կրթութիւնը լինի բարձր որակի», - ըսած է վարչապետ Յովիկ Աբրահամեանը՝ Գիտելիքի օրունակ եւ ուսումնական տարուան մեկնարկի առթիւ Լեւոն Միրիչեանի անունան տրեւանի թիւ 155 հիմնական դպրոց այցելութեան ժամանակ: Վարչապետը ներկայ գտնուած է առաջին դասարանի աշակերտներուն նորամուտի տօնական ձեռնարկին, կը տեղեկացնէն կառավարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան:

Վարչապետը շնորհաւորած է աշակերտները, մանկավարժներն եւ ծնողները Գիտելիքի ու դպրութեան օրունակ առթիւ, մարդած ձեռքբերումներ եւ նորանոր յաջողութիւններ: Յովիկ Աբրահամեան նշած է, որ այս օրը նշանակալից է յատկապէս առաջին դասարանի աշակերտներուն համար, քանի որ Սեպտեմբեր 1-ը կը նշանաւորէ անոնց կեանքի նոր փուլի սկիզբը:

Վարչապետին խօսքով՝ այս գեղեցիկ օրը անելի յիշարժան դարձնելու նպատակով դպրոցներ այցելած են նաեւ կառավարութեան անդամներն ու գերատեսչութիւններու ղեկավարները: Վարչապետ Աբրահամեան կարեւոր համարած է ապագայ սերունդին յաւուր պատշաճի կրթութիւն տալու հանգամանքը եւ վստահութիւն յայտնած, որ այդ ուղղութեամբ համապատասխան գերատեսչութիւններն ու մանկավարժները ամէն ինչ պիտի ընեն:

Այնուհետեւ կառավարութեան ղեկավարը շրջած է դպրոցը, եղած է



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA
www.gov.am

դասարաններ, ծանօթացած է ուսումնական պայմաններուն, զրուցած ուսուցիչներու, աշակերտներու եւ ծնողներու հետ:

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI 14 SEPTEMBRE 2015

Lettre de protestation contre le « village d'Azerbaïdjan » à Paris



Les co-présidents du Conseil de coordination des organisations arméniennes de France (CCAF) ont envoyé une lettre de protestation au maire du 1^{er} arrondissement de Paris demandant « l'annulation pure et simple » de l'évènement « Village d'Azerbaïdjan au cœur du Palais-Royal », prévu du 29 août au 10 septembre.

Selon l'administration du CCAF, ils sont choqués par le fait que l'Azerbaïdjan recevra les honneurs et qu'il est présenté comme une « terre de tolérance » malgré les répressions cruelles dans le pays, et dans le contexte des menaces scandaleuses envers l'Arménie. Ils demandent au maire d'annuler entièrement l'évènement précité servant uniquement à la propagande azerbaïdjanaise.

« Cette initiative nous choque, mais

ne nous étonne pas, eu égard aux moyens mis en œuvre par cet état (125^e sur 180 au classement sur la corruption de Transparency international) pour rehausser son image. Il faut cependant savoir qu'elle aura lieu juste deux semaines après la condamnation de la militante des droits de la personne, Leyla Yunus, (décorée de la Légion d'honneur), à 8,5 ans de prison, » ont écrit les co-présidents.

Ils ont également souligné que, « ce pays placé 162^e sur 180 au classement mondial de la liberté de la presse de Reporters Sans Frontières, abritera une exposition intitulée : Azerbaïdjan, terre de tolérance... » dans ce contexte, le respect des droits humains et l'attachement aux valeurs démocratiques et républicaines doit éveiller la prudence à l'égard de l'Azerbaïdjan.

Le ministère arménien de la Défense encourage le service féminin

Le ministre de la Défense d'Arménie, Seyran Ohanian, a encouragé la participation des femmes dans l'armée lors d'une réunion avec des jeunes de Tsaghkadzor, le 21 août dernier, en expliquant que l'armée avait besoin de la présence des femmes et de leurs « capacités intellectuelles. » « Beaucoup de filles servent dans les

Forces armées d'Arménie. Ces dernières font partie de différents types de services sur le terrain. Il y a des filles dans l'unité des forces spéciales, il y a des tireurs d'élite. D'année en année, le nombre de femmes parmi les cadets du ministère de la Défense de la République augmente, » a déclaré Ohanian lors du Rassemblement 2015 de la jeunesse pan-arménienne.

« Les hommes arméniens considèrent la question d'un autre point de vue. La majorité d'entre eux préfèrent que les femmes restent à la maison, ils préfèrent fonder une famille, et qu'elles soient le fondement et le conservateur de la famille, en ayant beaucoup d'enfants, ce qui permettra de résoudre de nombreux

Suite à la page 8



Dégeler des conflits gelés

Editorial écrit en anglais par Edmond Y. Azadian et publié dans The Armenian Mirror-Spectator en date du 29 août 2015

La récente escalade de violence et la violation continuelle du cessez-le-feu dans le conflit du Haut-Karabagh ne sont pas des cas isolés; ils doivent être perçus et analysés dans le contexte des luttes de pouvoir de la région, et dans des régions isolées du globe. Le 4 août, l'Azerbaïdjan a annoncé que la partie arménienne avait enfreint le cessez-le-feu, et ses forces avaient été repoussées par les soldats azéris, faisant quatre victimes du côté arménien. Le ministère de la Défense du Haut-Karabagh, a cependant rejeté ce rapport, et a annoncé que la partie azérie avait transgressé les lignes, avait perdu quatre hommes, et comptait 15 blessés.

Parallèlement à la puissance de feu, il y a la guerre des mots. Pourtant, il est vrai que le clan du président azéri Ilham Aliev, sous la pression de la communauté internationale, essaie de détourner l'attention du monde, et apaiser l'exaspération domestique, en raison de ses violations des droits de la personne, et la montée du mécontentement populaire.

Le gouvernement utilise une tactique sur deux volets : escalade de la violence à la frontière, et achat de la presse favorable dans les médias occidentaux, afin d'améliorer son image ternie.

Un article cru dans l'édition du 22 août du American Thinker est une bonne illustration de cette implantation de reportages dans les médias. Ce genre de campagne dans des médias mal informés faisant état de clichés et généralisations sans fondement ne peut que se retourner contre leurs auteurs. L'auteur, Maxim Gauin, se présente comme un expert français des relations internationales, basé nul ailleurs qu'à Ankara. Voici les conseils de l'auteur : « Le bon sens saute aux yeux en regardant une mappemonde : comme pays pauvre, et enclavé entre la Turquie, la Géorgie et l'Azerbaïdjan, sans frontières avec la Russie, le seul choix rationnel pour l'Arménie est de se réconcilier avec Ankara et Bakou, et de se tourner vers l'UE et les Etats-Unis. Ne pas voir ce simple fait, et ne pas agir sape les intérêts de l'Arménie, sans mentionner la stratégie des puissances occidentales dans la région. »

L'Azerbaïdjan, qui mise sur son pétrole et sa position stratégique comme protection contre l'Arménie, réalise soudain que ses deux hypothèses sont sur un terrain glissant : premièrement, les prix de l'énergie ont plongé de manière spectaculaire sur les marchés internationaux et, deuxièmement, l'accord nucléaire probable avec l'Iran conteste l'importance du territoire azéri comme rampe de lancement pour les attaques israéliennes ou américaines vers l'Iran.

L'Iran, lui, est prêt pour son rôle

régional. La récente déclaration de l'ambassadeur iranien à Bakou, Mohsen Pakayin, est significative.

Selon lui, « la situation qui prévaut au Karabagh est inacceptable, et nous voulons une solution équitable pour mettre fin au différend. Nous ne voulons pas des forces de paix dans notre région. » L'Iran n'est pas intéressé par un conflit militaire à sa frontière, ni n'est intéressé par un éventuel déploiement des forces de maintien de la paix de l'OTAN dans la région.

Bakou peut encore mettre ses espoirs sur le souffle croissant de la guerre froide pour se maintenir à flot. En effet, Stratfor (ndlr : société privée américaine qui œuvre dans le domaine du renseignement) prédit que la rivalité entre l'Occident et la Russie pourrait se déplacer vers le Caucase. Pour que cela se produise, l'Occident doit appuyer sur les boutons chauds de tous les conflits gelés en Transnistrie, en Abkhazie, en Ossétie du Sud et du Karabagh.

Dans son avis du 20 août 2015, Stratfor a écrit « Avec l'escalade du conflit ukrainien, le conflit entre la Russie et l'Occident est également en croissance. Le centre du différend peut se déplacer de l'Ukraine vers le Caucase - Géorgie, Arménie, et Azerbaïdjan - selon les analystes de renseignement privées des Etats-Unis. »

« La présence militaire de la Russie en Arménie, en Abkhazie et en Ossétie du Sud, ainsi que la coopération sur la sécurité avec l'Azerbaïdjan met la Russie dans une position de puissance externe dominante dans la région. Néanmoins, l'Occident veut empêcher la propagation de l'influence russe au sein de l'ancienne périphérie soviétique. »

Dans ce scénario, les stratèges d'Arménie devraient se demander si la base russe sur leur territoire est une bénédiction, ou une responsabilité, compte tenu des commentaires équivoques de l'armée russe qui, dans le cas d'une attaque, ne s'engage pas à défendre pleinement l'Arménie.

Alors que l'Arménie était prête à pousser un soupir de soulagement grâce à l'élimination de la menace d'une attaque imminente sur l'Iran, ce nouvel alignement dans les règles de la guerre froide efface leurs espoirs.

Un soulagement temporaire dont pourrait profiter l'Arménie se manifeste à sa frontière avec la Turquie, compte tenu de la guerre civile qui fait rage entre le gouvernement et les forces kurdes dans les parties méridionales du pays. Le Président Recep Tayyip Erdogan a mis son pays à feu en faisant l'erreur politique de croire qu'il pourrait consolider son pouvoir lors des élections parlementaires de novembre prochain. En lieu et place, il a commencé à perdre le soutien interne en raison des pertes croissantes dans la lutte contre les forces kurdes, ainsi que le soutien international pour


Suite à la page 8

Accord commercial bilatéral entre l'Arménie et la Chine

Un accord commercial bilatéral sera signé par les gouvernements d'Arménie et de Chine. L'accord vise à renforcer les relations commerciales et à activer les initiatives commerciales entre les deux pays.

Le projet de loi est à l'ordre du jour de la session du 31 août du gouvernement arménien. « Armenpress » rapporte que l'accord vise à établir une représentation commerciale d'Arménie en Chine et, en échange, une représentation commerciale de Chine en Arménie. Au cours de la visite du président arménien en Chine, du 24 au 28 mars dernier, un accord a été conclu pour étendre et approfondir les échanges et les relations économiques Arménie-Chine, et créer un environnement amical pour les importations de biens, de services, de technologies et de capitaux.

Selon le projet, « dans ce contexte, l'établissement de représentations commerciales donnera l'occasion de mieux faire connaître les intérêts économiques des deux pays, et donnera également l'occasion d'obtenir des informations sur la situation économique de la Chine, ainsi que de communiquer des informations analogues aux organismes de Chine intéressés. »



Des hôtels d'Arménie et du Karabagh participe à la certification Green Hôtels

Selon Arman Nalbandian, coordonnateur des programmes internationaux Eurasia Charity's international, les hôtels d'Arménie et du Haut-Karabagh sont invités à participer à l'opération de certification Green Hôtels. Nalbandian a déclaré qu'il s'agissait du premier projet de ce type à se tenir en Arménie. Selon lui, la certification Green Hôtels tient une place importante parmi un grand nombre de projets environnementaux.



Citant des données de l'Organisation mondiale du tourisme, Nalbandian a déclaré que quelque 70% des touristes des États-Unis et 90% des touristes européens préfèrent les hôtels qui contribuent à la protection de l'environnement.

En Arménie, cette certification est accordée par Eurasia Charity's international. L'hôtel Ani Plaza est le premier hôtel arménien à l'avoir obtenu.

Des experts internationaux ont mis au point un certain nombre de critères auxquels les hôtels doivent satisfaire pour obtenir le certificat, y compris l'utilisation efficace de l'énergie et de l'eau, la gestion des déchets, et l'utilisation des matériaux organiques.

La directrice exécutive d'Eurasia Charity's international, Lucy Arakelian, a ajouté qu'ils ont déjà envoyé des propositions à de nombreux hôtels.

Eurasia Charity's international a commencé ses opérations en 1997, et aide au développement écologique, économique et social d'Arménie. Il prend également en charge la protection des animaux, il fait la promotion de l'humanisme, et de la démocratie en Arménie, et la consolidation de la coopération entre les structures et les sphères d'affaires en Arménie, en Russie, et autres pays.

Le ministère arménien...

Suite de la page 7

problèmes démographiques », a déclaré Ohanian, ajoutant que les femmes arméniennes doivent avoir autant d'enfants qu'elles le peuvent pour aider l'armée. Le sexe d'un enfant, selon Ohanian, n'a pas d'importance; si c'est un garçon, il est le soldat de sa nation, et si c'est une fille, elle sera la future mère des soldats, a ajouté Ohanian.

Ohanian a déclaré qu'il est trop tôt pour parler de l'enrôlement obligatoire des femmes dans l'armée.

A une question d'un étudiant arménien sur le rôle du Groupe de Minsk de l'OSCE dans l'atteinte de la paix au Haut-Karabagh, Ohanian a déclaré, « Je suis positif à propos de l'activité du Groupe de Minsk de l'OSCE, et il est évident que le règlement du conflit du Karabagh ne peut se résoudre sur une courte période de temps. »

Le Groupe de Minsk de l'OSCE, selon Ohanian, a contribué à l'établissement d'une paix relative entre les parties au conflit. « Nous ne pensons pas qu'il doive y avoir de changements dans le nombre des pays coprésidant le Groupe de Minsk de l'OSCE. Bien sûr, on observe, pour le moment, une certaine diminution du potentiel politique.

L'Arménie contre le développement de l'énergie solaire

Le chef du Laboratoire de technologie solaire, Jozef Panossian, a accusé les autorités arméniennes d'entraver le développement de l'énergie solaire dans le pays sans plus de précisions sur les raisons.

« Je crois que le gouvernement devrait jouer un rôle central dans le développement de l'énergie solaire, mais les autorités entravent ce processus. En Arménie, il y a beaucoup d'entrepreneurs qui sont prêts à importer des panneaux solaires de Chine, où ils ne sont pas très chers, » a déclaré Panossian lors d'une conférence de presse.

« Les sources d'énergie traditionnelles, qui posent d'énormes dangers environnementaux, seront bientôt épuisées. La hausse des températures conduit à la fonte de la calotte glaciaire. Ce processus se poursuivra dans l'avenir, car le dioxyde de carbone libéré dans l'atmosphère contribue à l'effet de serre », a déclaré Panossian.

Il a souligné que la seule solution à ce problème est de remplacer les sources traditionnelles d'énergie par des sources renouvelables, ce qui aidera à prévenir l'impact négatif du changement clima-



tique sur l'Arménie.

« Les systèmes les plus efficaces sont l'énergie solaire, l'énergie éolienne, l'hydroélectricité, etc. Dans notre laboratoire, nous avons développé des panneaux solaires qui convertissent l'énergie solaire en énergie électrique. Ces dispositifs photovoltaïques sont des plus prometteurs, » a ajouté Panossian.

Selon les experts, l'Arménie a un grand potentiel pour des ressources énergétiques solaires. Le taux annuel de collecte d'énergie solaire en Arménie, est de 1 720 kWh pour 1 mètre 2 de surface plane, tandis qu'en Europe, la moyenne est de 1 000 kWh.

Croissance de 8,5% en sept mois de la production industrielle au Karabagh

La production industrielle de la République du Haut-Karabagh a cru de 8,5% au cours des sept premiers mois de 2015, pour environ 30 milliards de drams en prix courants, selon les derniers chiffres publiés par le Service national des statistiques du Karabagh.

L'industrie minière représente 26,8% de la production, le secteur de la transformation 37%, l'électricité, et le gaz naturel représentent 35,1%, tandis que l'eau et la gestion des déchets représente 1,1%.

Les ventes de produits finis au cours de la période étudiée se sont élevées à environ 29,5 milliards de drams en prix courants. Les ventes de viande de volaille se sont élevées à 4 141 tonnes métriques. 35,117 tonnes de lait et 371 600 œufs ont été produits. La construction a reçu 18,5 milliards de drams, 30% de moins qu'en 2014.

Dégeler des conflits...

Suite de la page 7

sa fausse politique contre l'EI. On raconte même que les États-Unis usent de pourparlers avec le Parti des Travailleurs Kurdes (PKK), valorisant leur guerre efficace contre l'extrémisme islamique.

Bien que les États-Unis nient tout contact avec le PKK et continue à utiliser le vieux cliché voulant que « la Turquie a le droit de se défendre », Washington supprime les missiles Patriot du territoire turc, signalant ainsi son mécontentement sur la politique egocentrique de M. Erdogan, qui fait fi des priorités de l'Alliance.

L'Allemagne a également retiré ses propres missiles Patriot, critiquant à haute voix la guerre menée par Ankara contre les Kurdes.

Le spécialiste des affaires turques Rouben Safrastian, à Erévan, estime que la boîte de Pandore pourrait être rouverte et relancer le Traité de Sèvres de 1920, qui avait promis l'indépendance aux Kurdes et donné un plus grand territoire à l'Arménie. Depuis toujours, le Traité de Sèvres a été un cauchemar pour les dirigeants turcs. Même si le

bras de fer avec les forces kurdes ne conduit pas à la relance du traité, la Turquie en aura plein les bras dans sa campagne de lutte contre la reconnaissance du génocide et surtout évitera d'encourager Bakou à pénétrer dans des aventures dangereuses.

À ce stade, l'escalade de la guerre froide ne semble pas constituer une menace pour le Caucase, compte tenu du fait que la politique du président Obama n'est pas celle de la gâchette facile contrairement à son prédécesseur. Son administration est plus encline à résoudre des problèmes insolubles à travers des négociations - Iran, Cuba, Amérique du Sud, Soudan du Sud, et d'autres conflits. Même l'arsenal nucléaire de la Corée du Nord, qui semblait constituer une menace pour la région il y a un an, a été mis en veilleuse.

Mais la rhétorique belliqueuse des deux partis se préparant aux élections présidentielles des États-Unis ne donne aucune assurance que ce dernier poursuivra sa politique étrangère axée sur la paix, permettant ainsi aux conflits gelés de demeurer au congélateur.

ABAKA

ENGLISH SECTION

MONDAY SEPTEMBER 14, 2015

Armenians — 1915, Yazidis — 2015

By Edmond Y. Azadian

One hundred years have elapsed since an entire nation was uprooted from its historic lands, exterminated and/or dispersed around the globe, yet the world has learned nothing. The same brutality, the same vicious campaign that was waged against the Armenians, today are being waged against Yazidis in Iraq. Pope Francis accused the world of indifference which encouraged the perpetrators of those crimes a century ago. Today, are we surprised that Yazidis meet the same indifference in their hour of need? At best, some lip service is offered by the powers who could halt these atrocities if they really wanted to.

The same criminal minds and bloody hands that exterminated 1.5 million Armenians in 1915 are in action today, in the year 2015, destroying and dispersing the Yazidi minority in Iraq. The beheadings are committed by the Islamic State (or ISIS/ISIL) but the main culprits are Turkish leaders who helped create the terror group and trained and armed them in front of the world. ISIS is an evil force to spread mayhem to accommodate Ankara's political designs on controlling the Middle East.

The Turkish leaders used ISIS to destroy Kessab's thriving Armenian life in Syria, to desecrate the Genocide memorial in Der Zor and threaten organized Armenian life in Aleppo.

A political charade is being played at the expense of peaceful populations in the region. It defies logic that the all-powerful US forces were able to pulverize the organized army of Iraq in a matter of a few days and yet cannot contain the ragtag army constituting ISIS, which has already occupied a swathe of territory as large as Great Britain on the landmass of Iraq and Syria.

The US has been cajoling the Turkish government to earnestly confront IS and allow the US war planes to use Incirlik Airbase for air strikes, but Ankara has been dragging its feet.

When Washington halfheartedly consented to allow Turkey to establish a no-fly zone in Syria, Ankara relented. It feigned that it has joined the US and its allies to fight IS, while in reality, it began to fight its Kurdish foes, which also happen to be the only combatants successfully facing down IS.

The idea of a no-fly zone is Turkey's plan to amputate Syria's territory. Already, the French Colonial powers had ceded in 1938 the Hatay region of Syria, mostly populated by Arabs and

Armenians, to Turkey, just as the same powers gave Cilicia to the latter, leaving the Armenian civilian population to the tender mercies of marauding Kemalist forces. Syria has never accepted the loss of Hatay.

Last week, during an exclusive interview with the BBC, Prime Minister Ahmet Davutoglu angrily blamed the news sources which were revealing the truth — that Turkey was tending to its own agenda in fighting the Kurds and only going through the motions of fighting IS. The journalists revealed that as of the date of the interview, Turkey had carried out 400 air strikes against Kurdish forces in Quandil mountains in Iraq and had carried one single raid against IS.

Of course, this dilly-dallying will embolden ISIS to continue its carnage.

While the rape and murder of Yazidi women was taking place unabated, only the plight of the American hostage jolted the conscience of the US public. Indeed, Kayla Mueller had been used as a sex slave for Abu Bakr, the self-styled caliph of the IS nation, before being murdered.

The Wall Street Journal, in its August 14 edition, brought to light the horrendous atrocities committed against the Yazidis: "ISIS has an elaborate, organized structure for its sexual slave trade, much like it developed an infrastructure for basic services in the territories it has claimed. The New York Times reported this week that ISIS planned to establish a sex market before its attack on Iraqi Yazidis on Mount Sinjar last August. ISIS considers the sexual use and abuse of Yazidi women as permitted under Islam because they are 'infidels.'"

The same exact logic was used by the Turkish government 100 years ago to rape Armenian women and confiscate Armenian properties.

Further down, the Wall Street Journal article continues, "And while many countries have denounced ISIS and its beheadings, mass executions and other horrific acts, little effort has been devoted to rescuing women taken as its sexual slaves."

The US air raids and Turkish mock air raids had not made a dent on ISIS' resolve to maintain occupied territory. Only the war-hardened Kurdish Pesh Mergas' fight yielded results and ISIS was forced to evacuate some territory in Iraq. What the Yazidis are discovering in those recaptured territories are mass graves, similar to the ones that exist to this day in the sands of Der Zor desert.

Life is too dangerous for the Yazidis and Christians in Iraq while ISIS forces

Cont'd on page 10

Armenia and Russia agree on Terms of Reference on conducting audit at ENA

Armenia's Ministry of Energy and Natural Resources together with Russia's Energy Ministry has agreed on the Terms of Reference of the audit to be conducted at the Electric Networks of Armenia (ENA) CJSC, as reported by Armenia's Ministry of Energy and Natural Resources.

The Terms of Reference are aimed at receiving the opinion of an independent international authoritative company regarding three issues.

"The first issue is the conclusion regarding the reasonableness of prices for 2009-2014, and the investigation of the level of trade and technological losses; the second issue is the effectiveness of the implemented investment projects, as well as the investigation of the reasonableness of payments for real property and vehicles; the third issue is the assessment of the efficiency of company management," the statement of the Ministry reads.

According to Armenia's Law on Procurement, ENA has announced an open competition for providing audit services. The winning company will complete its investigation 4 months after signing the agreement and will present its final report 30 days thereafter.

The competition applications will be submitted till 30 September 2015. The audit results will be made public, the statement reads.



Vatican Declared Syrian Bishop Killed in 1915 A Martyr

ROME — Pope Francis declared on Saturday, August 29, 2015 Flavianos Michael Melke, the first Catholic bishop of Syria, who was killed in Turkey in 1915, a martyr of the Catholic Church, according to Il Messaggero daily of Italy.

A mass was held in Lebanon, which brought together numerous patriarchs of Eastern churches in Lebanon, Syria, and Iraq.

Flavianos Michael Melke was killed on August 29, 1915, in the town of Cizre in the Ottoman Empire, now Turkey, because of his Christian faith. He was arrested by Ottoman authorities on August 28, 1915, alongside Chaldean Bishop Philippe-Jacques Abraham.

According to Muslim eyewitnesses, Melke and Abraham were given the choice to convert to Islam or be killed. Upon their refusal to convert, Abraham was shot dead immediately, while Melke was beaten and later beheaded.



Ambassador: Yerevan's British School of Business is example of successful cooperation

The British Council is one of the reliable partners of Armenia's Ministry of Education and Science, Armenia's Education Minister Armen Ashotyan said today at the meeting with the British Ambassador to Armenia Katherine Leach, who is completing her diplomatic mission in the country.

According to Ashotyan, the British Council widely supports teachers in improving English language teaching as well as in developing criteria for the assignment of academic titles in the framework of the Bologna process.

During the meeting, Ambassador Leach said that actual examples of successful cooperation is the operation of the British School of Business in Yerevan, as well as the National Program of Excellence in Education, which was developed according to the international criteria and in cooperation with the London School of Education and the University of Cambridge to serve as a platform for the Ararat Baccalaureate.



Armenia citizens can already visit Brazil without visa

Armenia's Government today adopted a decision according to which Armenian citizens can from now on visit Brazil without a visa.

According to Armenia's FM Edward Nalbandian, the decision is bilateral, i.e. Brazil citizens will also need no visa for visiting Armenia.

Currently Armenia has visa-free regime with two Latin American countries – Argentina and Uruguay – where the largest Armenian communities in the Southern America live.



PM: Armenian diplomats working abroad have to attract more investments

Armenian diplomats working abroad have to be more active to protect the economic interests of their country, Armenian Prime Minister Hovik Abrahamyan said addressing the Economy Minister on Monday.

"Why do we need so many trade missions abroad if they are not operating? You need to urge them to be more active," PM said.

The diplomats have to think on the options to attract new investments to the country and to promote Armenian export, he emphasized.



Two Armenian Families Originally from Kobane to Move from Turkey to Armenia



ISTANBUL (Public Radio of Armenia) — Two of the three Armenian families of the Syrian town of Kobane, who fled to Turkey following the Islamic State's attack on the town last year, are set to move to Armenia according to Ermenihaber.am, quoting a statement by the Armenian patriarchate of Istanbul. The families voiced their wish to move to Armenia during a meeting with the Patriarchal Vicar of Constantinople, Archbishop Aram Ateshyan, at a refugee camp.

Armenians - 1915...

Cont'd from page 9

are at large. They have decided to move to other countries. Some families have come to settle in Armenia, where a thriving Yazidi community has existed for decades.

Yazidis, numbering fewer than 1 million worldwide, are believed to be an offshoot of Kurds (though Yazidis themselves disagree) with their particular religion, which is a blend of pre-Christian, Sufi, Muslim and various monotheistic traditions. It is estimated that 40 to 50 million Kurds live in Iraq, Iran, Syria and Turkey. Both communities have been victims of persecution

in those countries on and off, with shifting policies. The only place where the Kurds and Yazidis have found safe haven has been Armenia. Even during the Soviet period, they developed their culture through publications and broadcasting. The Yazidi community in Armenia is 40,000 strong, constituting 1.3 percent of the country's population.

The president of the World Union of Yazidis Aziz Tamoyan said recently at a press conference in Yerevan that he is grateful to President Serge Sargsian and Armenia's other officials who have raised the issue of the Yazidi genocide in northern Iraq in international venues for more than a year.

"Only the president of Armenia has

THE YOUTH CORNER

That got me thinking

BZ, AZ (Before Zayn, After Zayn)

March of 2015 was a bit of a strange month for me. On one hand, there was the promise of a quickly ending semester, and on the other, there were all the stresses that came along with that: due dates and finals. In the midst of all of that, there was some news: Facebook casually let me know that Zayn Malik had left One Direction, the famous British/Irish boy band. I just stared at the title that was trending, not quite sure how to interpret it. I guess part of me wasn't that surprised that he left, the band had seemed to be going through a bit of a rough patch. But somewhere in me is a girl who fell in love with the band the second Liam Payne started singing you're insecure, don't know what for, a girl who spent pretty much the entirety of her senior year of high school thinking and talking about One Direction, a girl who found out she could go to their first concert in Montreal a couple of hours before the show. And that girl was really sad.

I'm not going to apologize for my love for them like I used to. I'm not going to start telling you that "they make girls happy, what's the harm in that?" because, while it all might be true, this isn't what this is about. It's just that Zayn leaving made me feel like something was ending for good. There's a small window of time, I feel, between your senior year of high school and university, where you're starting to grow up but still feel the last lingering traces of adolescence. I feel like One Direction represented that for me. And with Zayn leaving, it made me realize that those days are truly over. While One Direction continues to thrive and to make their music, it just doesn't feel the same anymore.

Don't get me wrong, I'm super excited to be 20. I'm excited to find out what the twenties have in store for me. I'm looking forward to it all. But still, between the ages of 17 and 20, it's a great window of time. Before that, it's the awkward and uncomfortable puberty. And before that, well, those are the years everyone will always be nostalgic of. But hey, it's over. Before Zayn's departure, it was great. Now let's see what After Zayn has to offer.

Sananne Wartabetian
Montreal

Industrial Output in Karabakh Grows by 8.5% in Seven Months

STEPANAKERT (ARKA)

— Industrial output of the Nagorno-Karabakh Republic (NKR) in the first seven months of 2015 surged by 8.5% to about 30 billion drams in current prices, according to the latest figures released today by the National Statistical Service of the NKR.

The mining and quarry industry was reported to have accounted for 26.8% of the output, the processing sector for 37%, electricity, natural gas and steam accounted for 35.1%, while water and waste management accounted for 1.1%.

Sales of finished products in the period surveyed stood at about 29.5 billion drams in current prices. Sales of meat, including poultry, amounted to 4,141 metric tons. 35,117 tons of milk and 371,600 eggs were produced. It was also reported that some 18.5 billion drams worth construction was implemented, 30% less than 2014.



supported us. He took to the floor of international organizations and raised the issue of the Yazidis. It is already a year that Yazidis in northern Iraq have been subject to a genocide but the international community and the world powers do not undertake any steps," added Tamoyan.

By empathizing with the other victims of genocide, we can elevate our tragedy to the level of universal pain.

Some Armenians and Jews, in grieving their tragic pasts, become inward looking and insensitive to the pain of others, resorting also to comparisons, such as our pain is greater than yours, or our martyrs were more valuable than yours. However, if we don't care about the tragedies of other ethnic

groups, why should they bother to embrace and sympathize with our pain?

In the Yazidis' case, Armenians have gone out of their shell to embrace another group in agony.

Incidentally, the Yazidis have laid the foundation of an imposing temple in the town of Aknalich in Armenia.

Human nature will not change. One hundred years later, the Turks are the same Turks that perpetrated mass atrocities, only this time with more modern weaponry.

If it is the destiny of weaker nations to become victims of political games, the world community cannot be comforted that by 2115, another genocide will be avoided.

Ստեփանակերտի մեջ բացուած է «Թումո» ստեղծարար ճարտարագիտութիւններու կեդրոնը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան նախագահներ Բակո Սահակեան եւ Սերժ Սարգսեան Սեպտեմբեր 2-ին մասնակցած են Ստեփանակերտի մեջ «Թումո» ստեղծարար ճարտարագիտութիւններու կեդրոնի բացման հանդիսաւոր արարողութեան: Այս մասին կը հաղորդէ ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութիւնը:

Նախագահ Սահակեան իր խօսքին մէջ նշած է, որ նման կեդրոնի գործունէութիւնը նոր որակ պիտի հաղորդէ Արցախի մէջ երիտասարդներու մտաւոր ներուժի զարգացման եւ ժամանակակից ճարտարագիտութիւններու կիրառման գործընթացին:

Երկրի ղեկավարը երախտագիտութիւն յայտնած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, «Սիմոնեան» հիմնադրամին

եւ «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերութեան հայրենասուներ այս նախաձեռնութիւնը իրականացնելու համար՝ նշելով, որ առկա մեր հանրապետութեան մէջ մարդկային դրամագումարի զարգացման գործի լաւագոյն ներդրումներն է: Կեդրոնին մէջ շրջայցի ժամանակ նախագահները ծանօթացած են կրթական այս հաստատութեան պայմաններուն եւ ուսուցման ծրագրին: Ըստ պատասխանատուներու, ծրագիրը հասանելի պիտի ըլլայ աւելի քան 500 ուսանողի, որոնց իւրաքանչիւրը «Թումո»-ի մէջ շաբաթական երկու օր պիտի սորվի կեդրոնի չորս հիմնական ոլորտներու՝ անիմացիայի, ֆիլմերու ստեղծման, կայքերու մշակման եւ խաղերու ստեղծման հիմունքները, ինչպէս նաեւ պիտի ստանայ 21-րդ դարուն բնորոշ այնպիսի հմտութիւններ, ինչպէս 3D ձեւաւորումը, ռոպոթաշինութիւնը, լուսանկարչութիւնը, կրաֆիքական



ձեւաւորումը եւ այլն: Հանդիսութեան մասնակցած են Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արցախի թեմի առաջնորդ Պարգէլ արքե-

պիսկոպոս Մարտիրոսեան, ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլեան, վարչապետ Արայիկ Յարութիւնեան, հիւրեր Հայաստանէն եւ արտերկրէն:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարուեց կրթութեան մշակների օրհնութեան կարգ

Օգոստոսի 31-ին՝ նոր ուսումնական տարեշրջանի նախօրէին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ճայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարուեց կրթութեան մշակների օրհնութեան կարգ:

Աւանդական դարձած այս արարողութեանը ներկայ էին ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարար՝ Արմէն Աշոտեանը, պետական եւ մասնաւոր բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների ղեկավարներ, ԱԺ գիտութեան, կրթութեան, մշակոյթի, երիտասարդութեան եւ սպորտի մշտական յանձնաժողովի նախագահ Արտակ Դաւթեանը եւ անդամները, կրթական պետական կառոյցների ներկայացուցիչներ, տարբեր մարզերից Մայր Աթոռ ժամանած հանրակրթական դպրոցների ու մանկապարտէզների տնօրէններ եւ մանկավարժներ:

Արարողութիւնը սկսուեց Մայր Աթոռի Զրիստոնեական դաստիարակութեան կենտրոնի տնօրէն՝ Գերշ. Տ. Վարդան Եպս. Նաւասարդեանի ողջոյնի խօսքով: Սրբազանը ներկաներին մաղթեց, որ նրանց գիտակցութեան մէջ միշտ թարմ մնայ Թարգմանչաց Ոսկեդարեան շրջանի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եռամեծար վարդապետների ոգին: «Նրանք իրենց աշխատանքին ու գործին լծուեցին պատասխանատուութեան բարձր եւ վեհ գիտակցութեամբ. պատասխանատու էին իրենց ժողովրդի առջեւ եւ իրենց Եկեղեցւոյ առջեւ: Այս պատասխանատուութեան զգացումն ենք մաղթում ամենքիդ այս 2015-2016 ուսումնական տարեշրջանի համար, բայց երբեք չբաւարարուելու պատասխանատուութեան զգացումով, այլ այն վերածելու յանձնառութեան...երբեք չվախենալով մեր զաւակների կրթութեան ու դաստիարակութեան գործը ձեր ուսերին առնելու», նշեց Վարդան Սրբազանը:

Այնուհետեւ նախագահութեամբ Մայր Աթոռի Արտաքին յարաբերութիւնների եւ արարողակարգի բաժնի տնօրէն Գերշ. Տ. Նաթան արք. Յովհաննիսեանի կատարուեց օրհնութեան կարգը, որի աւարտին կրթութեան ոլորտի պատասխանատուներին եւ մշակներին իր հայրապետական պատգամն ու օրհնութիւնը բերեց Նորին Սրբութիւն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Գիտելիք օրուայ եւ նոր 2015-2016 ուսումնական տարուայ մեկնարկի առիթով իր օրհնութիւնը բերելով



կրթութեան ոլորտի ներկայացուցիչներին՝ Նորին Սրբութիւնը մաղթեց, որ հայ ազգի զաւակները նրանց խնամքի ու դաստիարակութեան շնորհիւ աճեն ու հասակ առնեն որպէս Հայաստանի արժանաւոր քաղաքացիներ եւ Հայոց Եկեղեցւոյ արժանաւոր զաւակներ, դառնան Հայրենիքի յոյսը, ժողովրդի բարօր ու պայծառ օրուայ կերտողները:

Իր խօսքում Ամենայն Հայոց Հայրապետը մասնաւորապէս անդրադարձաւ արարողութեան ժամանակ ընթերցուած սերմնացանի աւետարանական առակին եւ մանկավարժի կերպարին: «Կրթութեան դաշտում սերմնացանները կրթութեան ոլորտի մշակներն են. դուք ձեր աշխատանքով կարող էք մեր զաւակների հոգիները վերածել ե՛ւ այրուած ժայռերի, ե՛ւ չոր ճանապարհների, ե՛ւ մոլախոտերով, փոշու տատասկով ծածկուած անդաստանների: Ձեր աշխատանքով դուք նաեւ կարող էք մեր զաւակների հոգիները դարձնել բերրի արտեր, եթէ հոգածութեամբ ու խնամքով, նախանձախնդրութեամբ եւ պատասխանատուութեան զգացումով իրականացնէք ձեր աշխատանքը...», նշեց Գարեգին Բ. Հայրապետը՝ մաղթելով, որ նրանց ներդրած ջանքերը շարունակ արդիւնաւորուեն, իսկ վաստակը միշտ արժանաւորապէս գնահատուի ինչպէս ուսանողների, այնպէս եւ մեր ժողովրդի բոլոր զաւակների կողմից:

Վերջում Նորին Սրբութիւնը հայցեց, որ Տիրոջ օրհնութիւնը միշտ ուղեկից լինի ներկաներին եւ առաջնորդի մանկավարժի պատուական ծառայութեան մէջ:

Ատոմ Էգոյեանի «Յիշէ՛» ֆիլմի անդրանիկ ցուցադրութիւնը տեղի ունեցաւ Վենետիկի փառատօսին

Գանատահայ բեմադրիչ Ատոմ Էգոյեանի նոր «Յիշէ՛» ֆիլմի անդրանիկ ցուցադրութիւնը տեղի ունեցաւ Սեպտեմբեր 10-ին Վենետիկի միջազգային կինոփառատօսի ծիրէն ներս: Ֆիլմը ընդգրկուած է Վենետիկի 72-րդ կինոփառատօսի հիմնական մրցոյթին: Կինոփառատօսի մեկնարկը տրուած է Սեպտեմբեր 2-ին, եզրափակիչ ձեռնարկը տեղի ունեցաւ Սեպտեմբեր 12-ին:

Մինչ ֆիլմի առաջին ցուցադրութիւնը ամերիկեան Hollywood reporter պարբերականի հետ զրոյցի ընթացքին Էգոյեան պատմած է, որ ֆիլմը Յոլոքոսթը վերապրածի մը մասին է, որ կը մարմնաւորէ Քրիստոֆըր Փլամմըրը: Անոր միջոցով բեմադրիչը մարդկութեան հետ կը խօսի ցեղասպանութիւններու, մարդկութեան դէմ յանցագործութիւններու եւ մարդու իրաւունքներու ոտնահարումներու մասին:

Էգոյեան պատմած է, որ ֆիլմը այդ ոճին մէջ առաջինը չէ, եւ ցեղասպանութիւններու մասին իր առաջին ֆիլմը՝ «Արարատ»-ը կը պատմէ Հայոց Յեղասպանութեան մասին: Լրագրողի հարցումին կա՞ն արդեօք Փլամմըրի կերպարին մէջ ընդհանրութիւններ «Արարատ» եւ «Յիշէ՛» ֆիլմերուն մէջ, Էգոյեան ըսած է, որ անոնք երկու տարբեր կերպարներ են: «Սակայն հետաքրքրականը այն է, որ այս տարի հայ ժողովուրդը կ'ոգեկոչէ Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցը եւ ես մարդկութեան դէմ յանցագործութիւններու մասին ֆիլմ մը ներկայացուցած եմ, որ ազգի պատմութեան, անցեալի, մարդոց յիշողութիւններու մասին է: Յիշողութիւնը միշտ կայ եւ մենք կը հասկնանք, թէ անոնք ինչպիսի ազդեցութիւն կը ձգեն սերունդներու վրայ», - ըսած է բեմադրիչը:

Ճգնաժամերը Դիմակայելու Համար Անհրաժեշտ Է Համահայկական Համադրում

«Քալիֆորնիա Զուրիեր»
(www.TheCaliforniaCourier.com)
թերթի հրատարակիչ և խմբագիր
Յարուբ Սասունեան կը գրէ.

Գոյութիւն ունի համակարգման լուրջ թերութիւն միջազգային կարեւորագոյն հարցերու առնչութեամբ: Աշխարհասփիւռ հայերը բազմիցս վտանգի ենթարկուած են, սակայն Հայաստանը կամ Սփիւռքը հազիւ թէ օգնութեան հասած են անոնց:

2003 թուականին Միացեալ Նահանգներու կողմէն Իրաքի գրաւումէն ետք՝ հայերը, միլիոնաւոր այլ իրաքցիներու հետ միասին, մեծ կորուստներ կրեցին: Թէեւ շատ բան հնարաւոր չէր ընել անոնց ֆիզիքական անվտանգութիւնը ապահովելու համար, սակայն Հայաստանի կառավարութիւնը եւ սփիւռքահայերը պետք է կազմակերպուած ջանքեր գործարդէին օգնելու անոնց, որոնք ձգեցին իրենց ողջ ունեցւածքը եւ փախան երկրէն: Ցաւօք, ոչինչ կատարուեցաւ իրաքահայ փախստականներուն օգնելու վերաբնակելու Հայրենիքի մէջ կամ այլուր:

Բարեբախտաբար, հայերու արձագանգը աւելի զօրաւոր եղաւ դեռ շարունակուող սուրիական հակամարտութեան ժամանակ: Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարարութիւնը աջակցեցաւ 15 հազար սուրիահայերէն շատերուն, որոնք տեղափոխուեցան Հայրենիք, իսկ սփիւռքահայ համայնքները աշխոյժօրէն դրամահաւաքներ կազմակերպեցին կարիքաւոր հայերուն Սուրիոյ մէջ օգնելու համար: Սակայն, ցաւօք, աջակցութիւնը անբաւարար էր Սուրիոյ մէջ մնացած, եւ Լիբանան կամ Հայաստան փախած հայերու հսկայական կարիքները հոգալու համար:

Կրնան ըլլալ այլ անսպասելի մարդածին կամ բնական աղետներ, ինչպէս 1988 թուականին Հայաստանի հիւսիսային շրջաններուն մէջ տեղի ունեցած աւերիչ երկրաշարժը, որուն հետեւանքները վերացնելու եւ աղետի գօտին վերականգնելու աշխատանքները դեռ կը շարունակուին 25 տարի անց...

Իսկ ի՞նչ կ'ըսէք Արցախին սպառնացող շարունակական վտանգին մասին: Տարիներով այդ մասին բարբաջելէ յետոյ, եթէ օր մը Ատրպէյճանի մտաւոր անհաւասարակչի նախագահը որոշէ լայնածաւալ յարձակում ձեռնարկել Արցախի դէմ, արդեօք աշխարհասփիւռ հայերը պատրաստ են օգնութեան փութալու իրենց հայրենակիցներուն: Հակառակ անոր, որ սահմաններու պաշտպանութեան պատասխանատուութիւնը ինկած է երկու հայկական հանրապետութիւններու զինուած ուժերուն վրայ, սակայն արդեօք սփիւռքահայերը պէ՞տք չէ համադրուած գործողութիւններու ծրագիր ունենան, որպէսզի կարենան դիմակայել նման գոյապայքար մը: Բոլոր անհրաժեշտ քայլերը պետք է նախօրոք կազմակերպել, որպէսզի յարձակման պարագային հնարաւոր ըլլայ անմիջապէս հակազդել:

Կարեւորագոյն այլ խնդիր մը, որ հայերու անյապաղ ուշադրութեան կարիքը ունի՝ Թուրքիոյ մէջ տիրող քառսային իրավիճակն է եւ հայ համայնքին առջեւ ծառայած հնարաւոր վտանգները, մասնաւորապէս.

1) Թուրքիոյ կառավարութեան մէջ ընդհանուր խառնաշփոթը՝ կապուած վերջերս իշխող կուսակցութեան կողմէն խորհրդարանական մեծամասնութիւնը կորսնցնելու եւ Նոյեմբեր 1-ին նախատեսուող Նոր ընտրութիւններ իրականացնելու հետ.

2) Թուրքիոյ ռազմաօդային ուժերուն կողմէ հերթական յարձակումները Հիւսիսային Իրաքի քրտական շրջաններու մէջ, եւ բախումները թրքական զինուորականներու ու քիւրտերու միջեւ Թուրքիոյ մէջ.

3) Թուրքիոյ նախագահ Էրտողանի բռնակալական իշխանութեան միջազգային քննադատութիւնը, անոր աջակցութիւնը «Իսլամական պետութեան» ահաբեկիչներուն եւ ձեռնարկած անողոք քայլերը ընդդէմ քաղաքական ընդդիմախօսներու:

Թուրքիայէն դուրս գտնուող հայերու համար հիանալի առիթ է միանալու հակաերտողանեան թափօրին: Միաժամանակ յարմար պահ է համագործակցելու միլիոնաւոր քիւրտերու հետ, որոնք դեմ են Էրտողանի վարչակարգին: Սակայն ճիշդ ժամը չէ լուռ մնալու, երբ թրքական վարչակարգը կը ձերբակալէ Տիարպէիի Սուրի շրջանի համաքաղաքապետ Ֆաթմա Պարուլը: Ո՞ր է ցասման ալիքը ընդդէմ խիզախ հայուհիի կամայական ձերբակալութեան: Ցաւօք, ուրիշ մէկը չբողոքեց Հայաստանի մէջ կամ Սփիւռքի... անցեալ ամիս քաղաքապետ Պարուլը եւ անոր ընտանիքը Երեւան էին՝ մասնակցելու Համահայկական խաղերուն: Այս առիթով անոնք այցելեցին Հայոց Տեղասպանութեան յուշահամալիր եւ թանգարան իրենց յարգանքի տուրքը մատուցելու 1.5 միլիոն հայ նահատակներու յիշատակին:

Աշխարհասփիւռ հայերը պետք է նաեւ աջակցին Իսթանպուլի մէջ «Նոր զարթօնք» երիտասարդական շարժման, որ կը պայքարի հակառակ բոլոր դժուարութիւններուն՝ Թուրքիոյ մէջ հայերու եւ միւս ազգային փոքրամասնութիւններու իրաւունքները պաշտպանելու համար:

մար: Այդ խումբի պայքարողներէն մէկը բողոքած է, որ անոնք Նոյնիսկ բարոյական աջակցութիւն չեն ստանար Սփիւռքէն, չիսօսած Հայաստանի մասին: «Նոր զարթօնք»-ի անդամները, որոնք ֆիզիքական բռնութեան ենթարկուած են թրքական ծայրայեղականներու կողմէ, վերջին երկու ամիսներու ընթացքին բողոքի հաւաքներ իրականացուցած են «Քեմփ Արմէն»-ի մօտ՝ թրքական կառավարութենէն պահանջելով բռնագրաւուած որբանոցը վերադարձնել հայկական համայնքին:

Քանի որ հայերը սփռուած են աշխարհով մէկ, ուստի անոնք կրնան դժբախտ միջադէպերու զոհ դառնալ ապագային: Խիստ անհրաժեշտ է, որ համաշխարհային հայկական յանձնախումբ մը, կազմուած Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի կազմակերպութիւններու ներկայացուցիչներէ, ծրագիրներ մշակէ՝ աշխարհի տարբեր վայրերու մէջ հայերուն սպառնացող արտակարգ իրավիճակներու պարագային: Դրամահաւաքներու իրականացման եւ գործողութիւններու ծրագիրներ կազմելու ժողովները պետք է իրականացնել ողբերգական իրադարձութիւններէն առաջ, այլ ոչ թէ յետոյ:

Հայոց Տեղասպանութեան հարիւրամեակի յանձնաժողովը իր յառաջիկայ երեւանեան համաժողովին կրնայ վերանուանուիլ եւ վերածուի մշտապէս գործող համահայկական մարմինի, որ պիտի զբաղի Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու բոլոր հարցերով, յատկապէս՝ արտակարգ իրավիճակներու մէջ:

*Թարգմանութիւնը կատարեց
Ռուկաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց
ԵՆԱԳՈՅՆ-ը*

ԼՂՀ հռչակման 24-րդ տարեդարձի առթիւ Շուշիի մէջ երկու մեծ կրթահամալիր բացուած է

Չորեքշաբթի՝ 2 Սեպտեմբեր 2015-ին, տօնական հանդիսութիւններու ծիրէն ներս, նախագահներ Բակօ Սահակեան եւ Սերժ Սարգսեան մեկնած են Շուշի:

Բերդաքաղաքին մէջ անոնք ներկայ գտնուած են Հայաստանի գիւղատնտեսական համալսարանի Շուշիի մասնաճիւղի նորակառոյց համալիրի բացման: Այս մասին կը հաղորդէ Artsakhpress.am-ը:

Մասնաճիւղը հիմնադրուած է ՀՀ եւ ԼՂՀ կառավարութիւններու որոշումներով 2008թ. Օգոստոսին՝ Արցախի պետական համալսարանի գիւղատնտեսական բաժանմունքի եւ Ստեփանակերտի պետական գիւղատնտեսական քոլեճի հիման վրայ: Անիկա սկսած է գործել 2009թ. Փետրուարին՝ Ստեփանակերտի մէջ: Հիմնադրման պահուն մասնաճիւղը ունեցած է 860 սան՝ երկու (պաքալորիայի եւ միջին մասնագիտական) կրթական համակարգերու մէջ, եւ այնտեղ դասաւանդած է 80 դասախօս:



Պատասխանատուներու հաւաստիացումով, այսօր մասնաճիւղը ունի շուրջ 1500 սան, եւ այնտեղ կը դասաւանդէ աւելի քան 100 դասախօս: Անցեալ 6 տարիներու ընթացքին մասնաճիւղը տուած է 1690 շրջանաւարտ՝ 573 պաքալորիա, 138 մագիստրոս եւ 980 միջին մասնագիտական որակաւորումով մասնագետներ:

Շուշիի մէջ հայկական երկու հանրապետութիւններու նախագահները այնուհետեւ այցելած են «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսայի տեղական մարմինին հովանաւորութեամբ եւ ԼՂՀ կառավարութեան համաֆինանսաւորումով քաղաքին մէջ կառուցուած՝ Եգնիկ Մոզեանի անուան արհեստագործական ուսումնարան: 225 ուսանողի համար կառուցուած եռայարկ ուսումնական կեդրոնը, որ կը զբաղեցնէ շուրջ 4050քմ մակերես, ունի հանրակրթական առարկաներու եւ արհեստներու ուսուցման համար անհրաժեշտ բոլոր յարմարութիւնները, ներառեալ՝ կահաւորուած դասասենեակներ, սարքերով ու պարագաներով յագեցած տարրալուծարաններ, արհեստանոցներ:

Սերկէյ Լաւրով. «ՏԱՅԵՇ-ի դէմ պայքարի միջազգային դաշինքը առանց Սուրիոյ մասնակցութեան ազդու պիտի չըլլայ»

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով շեշտեց, որ ահաբեկչութեան դէմ պայքարը աշխարհի դիմագրաւած ամենէն կարեւոր մարտահրաւերն է, մասնաւորաբար ինչ կը վերաբերի ՏԱՅԵՇ-ի կատարածներուն՝ ընդդիմախօսներու տեղահանութեան ու Իրաքի եւ Սուրիոյ մէջ հնութիւններու քանդումին:

Լաւրով Մոսկուայի միջազգային յարաբերութեանց համալսարանին մէջ իր արտասանած խօսքին մէջ «ՄԱԿ-ի ճամբով պատմութեան հետքերն ու արժէքները պահպանելու» կարեւորութիւնը շեշտեց՝ նշելով, որ ԵՈՒՆԵՍԿՕ-ն այդ ուղղութեամբ պետք է քայլեր առնէ:

Ռուսական դիւանագիտութեան պետը նշեց, որ ՏԱՅԵՇ Իրաքի մէջ ի յայտ եկաւ արտաքին միջամտութեան իբրեւ արդիւնք՝ աւելցնելով, որ ՏԱՅԵՇ-ի դէմ պայքարը կարեւոր է, սակայն ատիկա պետք է առանց երկակի չափանիշներու ըլլայ: Ան ըսաւ, որ զինեալ խմբաւորումները կ'օգտագործուին ընդդէմ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի, ճիշդ ինչպէս օգտագոր-

ծուած էին Իրաքի եւ Լիպիոյ մէջ:

«Սուրիոյ բանակը ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ աւելի ազդու է», ըսաւ ան՝ աւելցնելով, որ ՏԱՅԵՇ-ի դէմ Ուաշինկթընի ղեկավարած դաշինքը ազդու չէ եւ ՄԱԿ-ի ապահովութեան խորհուրդէն չէ լիազօրուած: «ՏԱՅԵՇ-ի դէմ պայքարի միջազգային դաշինքը առանց Սուրիոյ մասնակցութեան ազդու պիտի չըլլայ», ըսաւ ան՝ շեշտելով, որ Պաշար Ասատ «օրինական նախագահ է»: Միւս կողմէ, Իրանի արտաքին գործոց նախարար Մոհամետ ճաւատ Չարիֆ Թունուզի վարչապետ Յապիպ Սայտի հետ իր հանդիպումէն ետք յայտնեց. «Պետք չէ Սուրիոյ, Եմէնի եւ ճգնաժամի մատնուած այլ երկիրներուն մէջ երկխօսութեան եւ քաղաքական հովտոյթին նախապայմաններ ճշդել»:

Ան ըսաւ, որ «հիմնական ճակատումը չափաւորականութեան եւ ծայրայեղականութեան միջեւ է», եւ իսլամական բոլոր կուսակցութիւններուն կոչ ուղղեց ծայրայեղականութեան դէմ միասնականութեան:

Ֆրանսահայերը կը միանան Ազնաւուրի կոչին՝ սուրիացի ներգաղթեալները ընդունելու

Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդը կը միանայ աշխարհառօշոյտի հայագի շանսոնիէ, Չուիցերիոյ մէջ Յայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Շառլ Ազնաւուրի՝ Եւրոպա ժամանող ներգաղթեալներուն Ֆրանսայի հեռաւոր գիւղերուն եւ քաղաքներուն մէջ ընդունելու կոչին:

«Արցախփրէս»-ը կը հաղորդէ՝ վկայակոչելով Nouvelles d'Armenie-ն, «Սուրիան, որ Յայոց Տեղասպանութեան տարիներուն դարձաւ բազմաթիւ հայերու ապաստան, այսօր կը տեսնէ, թէ ինչպէս իր ժողովուրդը բռնած է աքսորի ուղին: Զկայ օր մը, երբ սուրիացիները չփորձեն ապաստան գտնել եւ վերականգնել իրենց բնականոն կեանքը Եւրոպայի մէջ: Շառլ Ազնաւուր Սեպտեմբեր 1-ին կոչ ըրաւ Ֆրանսային իր ներդրումը բերելու փախըստականներուն ապաստան տալու գործին: Փախստականները վտանգի եզրին են, սակայն այդ տղամարդիկ եւ կանայք ունին մեծ ներուժ՝ իրենց հմտութիւններով ու աշխատուժով: Ֆրանսայի հայ համայնքը, հաւատարիմ ըլլալով համերաշխութեան ոգիին Սուրիոյ ժողովուրդին հետ, որոնք իրենց դռները բացին 1915-1916 թուականներուն հայերուն առջեւ, չի կրնար անտարբեր ըլլալ անոնց նկատմամբ: Այսօրուան ներգաղթեալները կրնան Ֆրանսայի համար դառնալ այցեքարտ եւ անոնց հնարաւորութիւն տալու պարագային յաջողութեամբ ծառայել Ֆրանսային՝ տարբեր ոլորտներու մէջ: Ատոր համար ալ Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդը կը միանայ Շառլ Ազնաւուրի կոչին, որպէսզի իր ներդրումը բերէ փախստականներուն օգնութիւն ցուցաբերելու եւ գոյութիւնը պահպանելու գործին», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Շառլ Ազնաւուր հանդէս եկած է Եւրոպա ժամանող գաղթականներուն օգնելու կոչով: «Ես ծանր տառապանք կ'ապրիմ, երբ կը տեսնեմ այդ մարդոց բազմութիւնները, որոնք կը թափառին իրենց երեխաներուն հետ: Բարեբախտաբար, ես անձամբ չեմ ճաշակած նման վիճակի դառնութիւնները, բայց վստահ եմ, որ անոնք բաժին հասած են իմ ներգաղթեալ ծնողներու: - Յարկաւոր է հոգ տանիլ անոնց ապագայի մասին, բարելաւել անոնց վիճակը», - ըսած է Ազնաւուր:

Այդ առնչութեամբ ան յիշեցուցած է իր կողմէ արդէն առաջադրուած գաղափարին մասին, այն է՝ գաղթականները բնակեցնել Ֆրանսայի հեռաւոր բնակավայրերու, փոքր քաղաքներու ու գիւղերու մէջ, որոնք գործնականօրէն լքուած են տեղի բնակիչներուն կողմէ:

«Այդպիսով, այդ բնակավայրերը կը համալրուին նոր ուժով: Այդ գաղթականներուն մէջ կան ամենատարբեր մասնագիտութիւններու տեղ մարդիկ՝ բժիշկներ, մեքենագետներ, հացթուխներ: Անոնց ջանքերը թոյլ կու տան այդ աւաններու մէջ վերաբանալ դպրոցները, նամակատնային բաժանմունքները», - նշած է աշխարհառօշոյտի շանսոնիէն:



Tekeyan Cultural Association

Symphony of Colors Festival



Saturday, October 3rd, 2015

(depart at 9:00 am sharp from Tekeyan and return around 8 pm)

INCLUDES:

- Luxury bus
- Exceptional scenary / photo opportunities
- Mont-Tremblant visit and walk tour
- Chairlift
- Casino (\$10 chips for gaming)
- Light snacks at the casino
- Supper around 6 p.m. (optional)

\$ 40

For reservation: Kayané (514) 983-4759, Tekeyan (514) 747-6680



ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ ԳԱՆՏԱՅԻ ՄԱՐՍԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԿԱՍ ՀՈՎԱՆԱԴՈՐԱԾ ԶԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

ՍԵՊՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2015

ՄՈՆԹՐԵԱԼ

20 Սեպտեմբեր -
Orchestre Symphonique de Montréal-ը կը ներկայացնէ **“Bach, Brahms Bernstein et Penderecki : Porteurs d’espoir”** համերգը
 Աշխարհահռչակ յորինող **Քրիստոֆ Փենտերեցքին** կը ղեկավարէ իր **Psalm III** գործը, նուիրուած Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակին
 Maison Symphonique de Montréal, 1600 Rue St-Urbain, Montréal - երեկոյեան ժամը 7 :00-ին

27 Սեպտեմբեր -
The McGill Conservatory Staff and Guests Concert Series-ը կը ներկայացնէ՝
“Vocal Art of Armenian Composers: Survivors of the Genocide” համերգը
 Կը մեկնաբանուին Հայկական Ցեղասպանութենէն վերապրող յորինողներու գործերը - Ծրագրի ղեկավար՝ Յասմիկ Ինճեճիկեան
 Pollack Hall, 555 Rue Sherbrooke Ouest, Montréal - Կ.Ե. ժամը 4:00-ին

8-էն 25 Հոկտեմբեր-
Teesri Duniya Theatre-ը կը ներկայացնէ՝
 Rahul Varma-ի **“State of Denial”** թատերգութիւնը, բեմադրութեամբ՝ Liz Valdez-ի
 Հայկական Ցեղասպանութեան հետեւանքներուն եւ ուրացման մասին մերօրեայ պատում
 Segal Centre of Performing Arts, 5170 Chemin de la Côte-Ste-Catherine, Montréal

17, 24 եւ 25 Հոկտեմբեր-
Հայ Բեմ թատերախումբը կը ներկայացնէ՝
 Richard Kalinoski-ի **“Une bête sur la lune”** թատերգութիւնը, բեմադրութեամբ՝ Նանսի Իսսա Թորոսեանի
 Դրուագ՝ Ամերիկայի մէջ Նոր օճախ հաստատած Ցեղասպանութենէ վերապրող զոյգի մը կեանքէն
17 Հոկտեմբեր - Salle Émile-Legault, 613 Boul. Sainte-Croix, Ville Saint-Laurent - երեկոյեան ժամը 7 :30-ին
24 եւ 25 Հոկտեմբեր - GESU, 1200 rue Bleury, Montréal - երեկոյեան ժամը 8:00-ին եւ 7:00-ին յաջորդաբար

10 Դեկտեմբեր - Բացում **Franz Werfel**-ի **“The Forty Days of Musa Dagh”** գրքին նուիրուած ցուցահանդեսին
 Համագործակցութեամբ՝ **Centre commémoratif de l’Holocauste à Montréal**-ի
 Կը բանախօսեն՝ Carnegie Corporation of New York-ի նախագահ **Վարդան Գրիգորեան** եւ Montreal Institute for Genocide and Human Rights Studies-ի տնօրէն **Dr. Frank Chalk**
 Centre commémoratif de l’Holocauste à Montréal, 5151 chemin de la Côte-Sainte-Catherine, Montréal

19 Դեկտեմբեր - **Հարիւրամեակի տարուան եզրափակիչ համերգ**
 Ելոյթ կ’ունենան անուանի արուեստագետներ՝ սփրանսօ **Յասմիկ Պապեան** եւ դաշնակահար **Աւօ Գոլյումճեան**
 Église St-Laurent, 805 Boul. Sainte-Croix, Ville Saint-Laurent - երեկոյեան ժամը 8:00-ին

Comité Canadien du Centenaire du Génocide des Arméniens
 Հայկական Ցեղասպանութեան Հարիւրամեակի Գանձաքոյի Մարմին

ORCHESTRE SYMPHONIQUE DE MONTRÉAL
 Présenté par Hydro-Québec

ORCHESTRE SYMPHONIQUE DE MONTRÉAL-ը կը ներկայացնէ
BACH, BRAHMS, BERNSTEIN ET PENDERECKI
“PORTEURS D’ESPOIR”
 համերգը
 Գանձաքոյի մէջ առաջին ելոյթով՝ աշխարհահռչակ յորինող **KRZYSZTOF PENDERECKI** կը ղեկավարէ իր **PSALM III**-ը
 նուիրուած
ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ
 Կիրակի 20 Սեպտ. երեկ. ժամը 7-ին
 Maison Symphonique de Montréal
 1600, rue St-Urbain, Montréal, Qc H6X 1Z8

Տոմսերու համար այցելեցէ՛ք՝
 - Անգլերէն - <http://bit.ly/1EUaGT9>
 - Ֆրանսերէն - <http://bit.ly/1WQO411>
 Այս կայքերու փոմսերը 15% զեղչով են հայ համայնքին համար

ԳՐԱԴՈՒԿԱԾ ԹՈՒԿԱԿԱՆ
 Կիրակի, 8 Նոյեմբեր 2015
ԱՍՄՈՒՆՔԻ ԵՐԵԿՈՅ
 Նուիրուած
 Դանիել Վարուժան-ի
 Կատարում
 Նարեկ Ղազարեան

ԵՇԴՈՒՄ
 Նախորդ թիւին մէջ՝ Ողբացեալ Սօնիա Գալանեան-ի մահուան բառատունքի հոգեհանգստեան պաշտօնի թուականը փոփոխութեան ենթարկուած է, այդ պիտի կատարուի Կիրակի, 20 Սեպտեմբեր 2015-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցոյ մէջ:

Desjardins
 Caisse de Chomedey

Hrair Ketchedjian, B.A. Écon.
 Directeur Général
 Représentant en épargne collective pour Desjardins
 Cabinet de services financiers inc.

450 688-0900, poste 215
 Télécopieur : 450 688-1704

Siège social
 3075, boul. Cartier Ouest, Laval (Québec) H7V 1J4
desjardins.com/caissedechomedey

«ԱՊԱԳԱՅ»-ի քառասունամեակի առիթով.
Շուտով պիտի սկսի գործել. նաեւ,
ABAKA News, online
 Համացանցային եռալեզու ամենօրեայ լրատուական ճոխ հրատարակութիւնը



ABAKA WEEKLY 40TH ANNIVERSARY

The official launching of abakanews.org
Appearances by distinguished guests & many surprises

Headline performance by: **SPIDEY**
www.spideymagic.com



HE'S **AMAZING!**
-MTV UK

AS SEEN ON **Discovery**

SPIDEY

HYPNOTIST | MENTALIST

This Gala Banquet is by invitation only, please inquire by contacting Salpy: 514-747-6680
abaka@bellnet.ca

Saturday, October 10 2015, at 8:00 pm
Tekeyan Center, 825 rue Manoogian, St-Laurent, Qc. H4N 1Z5
centretekeyan@bellnet.ca



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 24Դ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Հովանավորությամբ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՕՐ ԴԵՍՊՈՆՆԵՐՆԵՐԻ
ՊՐԵՍ.ԱՐՄԷՆ ԵԳԱՆԵԱՆԻ


ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝
Ս.Դ.Հ.Կ. Մոնթրեալի Վարիչ Մարմինի
Հ.Յ.Դ. «Ս. Փափագեան» եւ «Ս. Զէյթեան» Կոմիտէներու
Ռ.Ա.Կ. «Է. Բարագեան» Ակումբի

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈՒՅՑԱՅԱԳԻՐ

Տեղի կ'ունենայ Շաբաթ 19 Սեպտեմբեր 2015 երեկոյեան ժամը 8:00-ին
Vanier Auditoriumի մէջ, 821 Ave. Sainte-Croix Montreal, H4L 3X9

Միրով հրաւիրուած է հայ գաղութը

Մուտքը ազատ




Թեյեան Մշակութային Միութիւն



Գոհաբանութեան հիւրասիրութիւն

Thanksgiving dinner

Կիրակի, Հոկտեմբեր 11 կ.ե. 3:00էն սկստալ



Thanksgiving is about getting together.
Come over with your family and enjoy this moment of appreciation.

2եր տեղերը ԱՆՊԱՅՄԱՆ պէտք է ապահովել
Reservation is a must

20 \$
Dinner, Salads, Desert, Coffee/Tea

Centre Tékeyan Réervations Tekeyan (514) 747-6680 Roupen (514) 779-2645
825 rue Manoogian, St-Laurent H4N 1Z5

Գերմանական համալսարանը արգիլած է քննարկել Հայոց Ցեղասպանութեան հակասող թեզերը

Թրբական «Ուլուսալ Զանալ»-ի կայքը կը հաղորդէ, որ Գերմանիոյ Տուիգպըրկ Էսսեն համալսարանը որոշած է արգիլել Հայոց Ցեղասպանութեան իրողութեան հակասող տեսակետներու քննարկումը: Համալսարանի թուրք ուսանողները պարտադրուած են 1915-ին տեղի ունեցածը ներկայացնել իբրեւ «Հայերու ջարդեր»:



Ատոր իբրեւ պատասխան՝ «Խաղաղութեան եւ երկխօսութեան» միութիւնը նիւթին լուսաբանման համար աշխատանքներու կը ձեռնարկէ: Անոնք համալսարանէն կը պահանջեն բաց սիստ իրականացնել, սակայն համալսարանը ասիկա չէ արտօնած: Միութիւնը հարցին առնչութեամբ բանաձեւ ներկայացուցած է համալսարանի ղեկավարութեան, սակայն այդ ալ չէ ընդունուած: Թուրքերը փորձած են համալսարանի հանրակացարանին մէջ թուցիկներ բաժնելով ներկայացնել նիւթին առնչութեամբ իրենց դիրքորոշումը, սակայն անսպասելի արդիւնքի հասած են: Ոստիկանութիւնը հանրակացարան եկած եւ արգիլած է ցրուել թուցիկները:

Նուիրատուութիւն

Տեր եւ տիկին Աւետիս եւ Արշօ Ճիհանեան, տիկին Անի Խուտաւերտեան՝ Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանի աշակերտներու՝ 1945-ին ծնունդ առած դասընկեր դասընկերուհիներու 70-ամեակի տարեդարձի տօնակատարութեան առթիւ, Մոնթրեալի Թ.Մ.Ս-ի վարչութեան կը նուիրեն 100-ական տոլար:

ԱՊԱԳԱՅ 40

ՀՈՎԱՆԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐՇ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ

ԵՒ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ ԳԱՆԱՏԱՅԻ ՄՕՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԼԻԱԶՕՐ ԵՒ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՍՊԱՆ
Ն.Վ. ԱՐՄԷՆ ԵԳԱՆԵԱՆԻ

«ԱՊԱԳԱՅ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ 40-ԱՄԵԱԿԻ
ՃԱՇԿԵՐՈՅԹ – ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Պիտի գործադրուի՝
«Ապագայ» ն 40 տարիներու ընդմէջէն՝
Դէպի նոր ապագայ

Պատշաճ եւ նաեւ զուարճալի յայտագիր
Պատմական եւ Յիշատակելի դրուագներ ու յատկապէս՝
ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ABAKANEWS.ORG online-Ի ԲԱՅՈՒՄ

Յատուկ ելոյթ միջազգային համբաւի տիրացած

երիտասարդ աճապարար
ՊԵՏՕ (Spidey) ԱՔՔԷԼԵԱՆ -ի

Կախարդական «ԱՊԱԳԱՅ»ի ակնարկով
ԹՄՄ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՁ

Շաբաթ, 10 Հոկտեմբեր 2015, ժամը երեկոյեան 8-ին

ՍՈՒՏՔԸ ՀՐԱԻԷՐՈՎ

ՏԵՂԵՐՈՒ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ ԹՄՄ ԿԵԴՐՈՆ՝ 514-747-6680

